# Ազգ

Azg

19-25 ԱՊՐԻԼ 2024 ՈՒՐԲԱԹ 013(5795)

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## Գոնե Դադիվանքը կարո՞ղ ենք փրկել

Ապրիլի 17-ին, 18-ին գերմանական ԶԼՄ-ները անդրադառնալով «ՌԴ ԶՈՒ-ի Լեռնային Ղարաբաղից դուրս գալու» իրողությանը, հաղորդում են նաեւ, որ Դադիվանքի համալիրն արդեն հանձնվել է Ադրբեջանի ոստիկանությանը: n-tv-ն Khudaveng ձեւն է կիրառել, ինչպես Բեռլինում դեսպան Աղաեւը ապրիլի 16-ին X-ի իր էջում է խեղաթյուրել վանքի անունը: Դադիվանքի լուսանկարը հրապարակելով, դեսպանը գրում է, թե «9-13-րդ դդ-ում ադրբեջանցի մահմեդականներով շրջապատված տարածաշրջանում կառուցված համալիրը միշտ հարգանք է վայելել, ապշեցնող գեղեցկություն ունի: Ադրբեջանցիների հիացմունքի խորհրդանիշն է՝ մեր քրիստոնեական ժառանգության եւ միջկրոնական ներդաշնակության հանդեպ»: Երեկ՝ ապրիլի 18-ին, ադրբեջանական caliber կայքն արդեն ծանուցեց, թե «Ադրբեջանը անհրաժեշտ քայլեր կձեռնարկի վանքը հայկական վանդալիզմից պաշտպանելու համար»: Բա՞...:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա**

*ՕՐԵՐԻ ՀԵՏ*

## Ընդդեմ ուրացողների եւ ժխտողների

Թեեւ որոշ մասնագետներ պնդում են, թե լրիվ հետազոտված եւ ուսումնասիրված են Հայոց ցեղասպանությանը վերաբերող բոլոր տվյալներն ու փաստերը, սակայն կարծում եմ, որ նման պնդումները չափազանցություն են եւ, առավել եւս, հակագիտական: Ճիշտ է, ցարդ ահռելի քանակությամբ փաստեր ու վկայություններ են կուտակվել, սակայն ոչ ոք չի կարող բացառել, որ այսօր, վաղը կամ մյուս օր դեռեւս հայտնաբերվեն ցարդ մեզ անծանոթ մնացած տվյալներ տարբեր երկրների պետական կամ մասնավոր արխիվներում: Իսկ եթե մի օր, ինչպես գրաբար խոսքում է ասվում՝ հրաշիւք իմն, ինչ-որ մի հրաշքով բացվեն թուրքական, հատկապես զինվորական անձեռնմխելի արխիվները, ի՜նչ նոր տվյալների ենք հանդիպելու, որոնք գալու են վերահաստատելու, ամբողջացնելու մեր բոլորի, այդ թվում օտարազգի հետազոտողների պատկերացումները Հայոց ցեղասպանության վերաբերյալ:

Անշուշտ, դեռեւս 1919 թ.ից, երբ Կ. Պոլսում թուրքական ռազմական դատարանը (տրիբունալ) արդեն պաշտոնապես համապատասխան վճիռներով մահապատիժ, երկարատեւ բանտարկություն եւ այլ պատիժներ սահմանեց երիտթուրքերի պարագլուխների դեմ, մինչ այդ Հայոց եղեռնի մասին միայն աղոտ տեղեկություն ունեցող շրջանակներն անգամ իմացան, որ արեւմտահայությանը ցեղասպանելու, հայրենազրկելու, ունեզրկելու, իսլամացնելու քաղաքականությունը պետականորեն նախածրագրված ու գործադրված է եղել Թուրքիայի իշխանությունների կողմից: Դատական վճիռ, որը, ուշադրություն, ցարդ որեւէ դատարանի կողմից չի՛ բողոքարկվել, չի բեկանվել...

Եվ եթե այն ժամանակ, շուրջ մեկ դար առաջ, նաեւ Մ. Նահանգների դեսպան Հենրի Մորգենթոյի հուշերից, այնուհետեւ Յոհաննես Լեփսիուսի տեղեկագրից, եվրոպական եւ ամերիկյան մամուլից շատ շատերը հասկացան ողջ իրականությունը, ապա այսօր, շուրջ 105 տարի անց, այն էլ Հայաստանում, նույնիսկ պետական տարբեր մարմիններում եւ անգամ Ազգային ժողովում բուսնել են մարդիկ, որոնք Ցեղասպանության փաստը վավերական համարելու համար ապացույց են ուզում, զոհերի անուն-ազգանուններ, վիճարկում են ցեղասպանվածների թիվն ու քանակը:

Աներեւակայելի է պարզապես: Նույնիսկ թուրք ամենաթունդ ժխտողականը պիտի չհամարձակվեր նման «ապացույցներ» պահանջել: Պիտի չպահանջեր բնորոշել՝ տեղի ունեցածը կոտորա՞ծ էր, եղե՞ռն, թե՞ ցեղասպանություն, երբ դրա բնորոշումը, որպես «տիպական ցեղասպանություն», տվել է **Ռաֆայել Լեմկինը** 1944 թ.ին հրատարակած Axis Rule in Occupied Europe գրքում եւ 1948-ին՝ ՄԱԿ-ի կողմից ընդունված իր հայտնի օրինագծում:

Թերեւս կարելի էր ընդհանրապես չանդրադառնալ հայանուն այդ մարդկանց ասածներին, արհամարհել կամ դրանք վերագրել նրանց տգիտությանը, եթե այդ՝ իբր գործնամտությունը վարակիչ չլիներ «ՔՊ»ական շրջապատում, այսինքն՝ իշխանական աքլորախմբում, ըստ որի, իբր Հայոց ցեղասպանությունը, դրա համընդհանուր ճանաչման գործընթացը խանգարում է Հայկական պետականության խաղաղ գոյատեւմանը, զարգացմանը, իմա՝ իրենց իշխանության հետագա գոյությանը:

Հայոց ցեղասպանության պատմությունը, ճանաչումը եւ, նույնիսկ, ժխտման, մերժման եւ ուրացումի ակտերը ոչ թե եւ ոչ միայն հայոց, այլեւ համաշխարհային պատմության ուսումնասիրման խնդիր են անկախ մեր կամքից: Բայց քանի որ ժխտողականությունը (negationism), լեմկինյան բացատրությամբ, քրեորեն պատժելի արարք է եւ ուղիղ շարունակությունը ցեղասպանության արարքի, այն ոչ միայն պարսավանքի, այլեւ դատական հետապնդումի պետք է ենթարկվի առաջին հերթին մեր կողմից, հայանուն «մեր» մարդկանց նկատմամբ, ովքեր համարձակվում են հակադրվել միաժամանակ ե՛ւ միջազգային օրենքին, ե՛ւ մեր Անկախության հռչակագրին ու Սահմանադրությանը:

ՀՀ դատախազության պարտականությունն է նման մարդկանց պատասխանատվության ենթարկելը, անկախ նրանց հանգամանքից, զբաղեցրած պաշտոնից եւ աթոռից:

**ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ**

## Հրեն՝ բաց դաշտում կովն արածում է առանց հիշողությունների

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Մեր տարածաշրջանում այն արագությամբ են իրադարձությունները սուրում, որ մեզ նման փոքր պետությունում հազիվ թե հասցնում ենք նկատել ու գնահատել դրանց ուղիղ կամ անուղղակի ազդեցությունը մեր խնդիրների վրա, այդ պատճառով առաջին հայացքի տպավորությունն այն է, որ մեր երկրում ամեն ինչ շարժվում է ավտոպիլոտով: Մինչդեռ՝ մեր զգոնության երաշխիքը մեր շուրջը կատարվողին սթափ գնահատական տալն ու այս կամ այն սցենարին պատրաստ լինելն է:




Օրինակ՝ Իրան-Իսրայել վերջին սրացումից (իրական, թե բեմադրված՝ այլ հարց է) հետո մեր հարեւան ոխերիմը հաստատ զգուշավոր է դարձել եւ այդպիսին կմնա, մինչեւ Իսրայելը որոշի՝ պատասխան հարվածներ հասցնելո՞ւ է Իրանին, թե՞ ոչ: Սա մեզ անսպասելի ընձեռված հարաբերական դադար է Ադրբեջանի սադրանքներից, որն ըստ ամենայնի չի ընկալվում: Մինչեւ Իրան-Արեւմուտք փոխադարձ կոշտ բառապաշարը վերջանա՝ երեւի բավական ժամանակ անցնի:Այս պահին ուղղակի պետք էր սառեցնել Տավուշի չորս բնակավայրերի տարածքները հետուառաջ անելու կամ սահմանազատումն ու սահմանագծումը Տավուշից սկսելու մասին խոսակցությունը: Ոչ ոք չգիտե, թե ինչ կհետեւի Իրանի այն կոշտ հայտարարություններին, թե իր հարեւանների անվտանգությունն իր անվտանգությունն է: Ոչ ոք չգիտե, թե ի՞նչ տեղի կունենա, եթե Իսրայելը ականջալուր չլինի իր հովանավորներին, հարվածի Իրանին եւ ստանա Իրանի արտգործնախարարի խոստացած վճռական, անհապաղ եւ լայնածավալ պատասխանը:

Վտանգ, թե՞ հնարավորություն է պարունակում վերջին տարածաշրջանային սրացումը Հայաստանի համար՝ ո՛չ խորհրդարանական, ո՛չ վերլուծական հանրույթը չգիտեն, դատելով մշտական թեմաները մշտական մունետիկներով արծարծելու եւ գործընթացներից ուշացող նրանց արիշվերիշներից, ինչպես նաեւ վարչապետի՝ Ոսկեպար, Բերքաբեր, Կիրանց երկրորդ այցելության արտահոսքերից, որտեղ նորից խոսք է գնացել հողատարածքների փոխանակությունից, սահմանագծերը հետուառաջ անելուց:

Նույնը վերաբերում է ռուս խաղաղապահների երեք քառորդի՝ Արցախի տարածքից հեռանալու փաստին. ի՞նչ է հետեւելու դրան, արդյոք դա Արեւմուտքի այն շտապողականության հե՞տ է կապված, որով արեւմտյան երկրներն իրենց լոգիստիկ երազանքի իրականացումն են տեսնում տարածաշրջանով, այդ թվում՝ Սյունիքով: Կամ ինչո՞ւ են մնում հինգ հարյուր ռուս խաղաղապահները: Արդյոք որպես տեսական երազանք էլ փակվո՞ւմ է արցախահայության վերադարձի հնարավորությունը, ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչ **Զախարովան** արդեն ձե՞ռք է առնում, բա թե՝ Լեռնային Ղարաբաղի հայերը պետք է անվտանգ կարողանան վերադառնալ: Արցախն անվտանգ հանձնվեց Ադրբեջանին, ո՞ւր վերադառնան՝ Ադրբեջա՞ն: Ակնայի ռուս-թուրքական կենտրոնն էլ է դադարեցնում աշխատանքը, ի՞նչ է հետեւելու: Արդյոք ավարտվե՞ց Թուրքմենչայի պայմանագրի իրավազորությունը՝ ռուսների հեռանալով, ու Իրանը կարող է հավակնություններ ունենալ Արցախի նկատմամբ, ինչպես որ Թուրքմենչայի պայմանագրից առաջ էր: Այս մեծ խառնակչության մեջ ի՞նչ է գալու գլխներիս:

Եթե մեր իշխանությունը մոլորվել է տարածաշրջանային մեծ խաղացողների՝ վաղուց գծագրված ու Հայաստանին պարտադրվող ծրագրերի մեջ, դա չի նշանակում, որ տարբեր գործոններ, այս անգամ, ասենք, Իրանի գործոնը, չեն կարող փոխել այդ ծրագրերը: Մի քիչ ճկուն եղեք, էլի, ընդհանրապես մոռացեք Հայաստանի առկա սահմանների ներսի կողմից ինչ-որ բան հանձնելու մասին:

⇨5

## Հայոց ցեղասպանության անվերականգնելին նաեւ այն է, որ ողջակիզված Մեծ մեծ մայրիկիս անունը չգիտեմ

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

**Գերմանիա**



Պապիս՝ Գեւորգ Վարդանյանի՝ ցեղասպանության վերապրողի հուշերն ինձ գրավոր չեն փոխանցվել: Մայրս 6 ամսական է եղել, երբ հայրը կամավոր մեկնել է Հայրենական մեծ պատերազմին մասնակցելու, զոհվել է: Ստալինյան հայացքի ներքո 1937 թվականին նրա գրած գրագետ ու ժլատ ինքնակենսագրականում, որ արխիվում գտա 2017-ին, բացակայում են իր մոր, նաեւ վերապրող քրոջ անունները, սակայն մի սահմռկեցուցիչ տեղեկություն այդուհանդերձ փոխանցում է՝ «մեր ընտանիքը 7 զոհ ունեցավ.»...ու ոչ մի անուն:

Մայրս շատ էր տառապում, որ իր մեծ մոր անունը չգիտեր: Պապն ավելի ուշ ամուսնացել էր գաղթի ճանապարհին իրեն հանդիպած բախտակից մի կնոջ հետ, որի մեծ ընտանիքից էլ մի որդին էր փրկվել:

⇨4

# Իրանի պատժիչ գործողությունների ուղերձը Բաքվին

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

**Իրանագետ**

Իրանի տարածքից Իսրայելին հարվածելու եւ պատժելու Թեհրանի քայլը ռազմավարական որոշում էր, որի շնորհիվ Թեհրանին հաջողվեց հստակ ուղերձ հղել Թել Ավիվին, որ Իրանը հաստատակամ է պաշտպանելու իր ազգային շահերն ու համաչափ ուժ կիրառելու իր տարածքին ուղղված ոտնձգությունները չեզոքացնելու համար:

Տվյալ որոշումն ընդունելիս, Իրանի մեկնակետն այն համոզմունքն էր, որ դեսպանընկալ երկրներում անձեռնմխելիության իրավունքով օժտված դիվանագիտական ներկայացուցչությունները փաստացի համարվում են հյուրընկալվող երկրի տարածքը:

Թեհրանը նաեւ այդ եղանակով ի ցույց դրեց տարածաշրջանում իր ուժն ու հեղինակությունը՝ կատարելով երկրի հոգեւոր առաջնորդ **Ալի Խամենեիի**՝ Դամասկոսում ԻԻՀ հյուպատոսարանի հրթիռակոծման առիթով հնչեցրած այն առաջադրանքը, որ «Իսրայելը սխալվել է եւ պետք է պատժվի»»:

Դա նաեւ պետք է ունենա կանխարգելիչ ազդեցություն՝ հակառակորդների կողմից հետագայում Իրանի կարեւոր նշանակության օբյեկտների նկատմամբ հնարավոր ահաբեկչական գործողությունները բացառելու առումով:

Թեհրանի այս վճռական քայլը նաեւ հստակ ուղերձ էր այն երկրներին, որոնք



թերահավատորեն են նայում Իրանի նախանշած «կարմիր գծերին»: Կարծում ենք, այս գործողությունը համոզիչ կերպով ցույց կտա Ադրբեջանին, որ Հայաստանի տարածքով միջանցք բացելու ծրագրերին հակադրվելու վճռականությունն Իրանի անընկրկելի որոշումներից է:

Պատահական չի կարելի համարել ապրիլի 16-ին Երեւանում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ ՀՀ-ում ԻԻՀ դեսպան **Մեհդի Սոբհանիի** հայտարարությունն այն մասին, որ Իրանը վերահաստատում է Հարավային Կովկասում միջազգայնորեն ճանաչված սահմանների փոփոխությունը մերժելու իր վճռականությունը: Դեսպանը նաեւ անդրադարձել է Իսրայելի ու Ադրբեջանի ռազմական համագործակցությանը եւ հիշեցրել, որ Իրանը բազմիցս մեղադրել է Իսրայելին տարածաշրջանը ռազմականացնելու մեջ:

Պատժիչ գործողություններից հետո Իրանի ու Իսրայելի միջեւ հնարավոր պատերազմի հեռանկարը շատերին է մտահոգում: Հանրային կարծիքն արտացոլող միջազգային մամուլի բարձրացրած հարցերը բավականին շատ են. Արդյո՞ք հակամարտող կողմերը կխուսափեն համատարած պատերազմից, եւ ո՞րն է լինելու յուրաքանչյուրի նախընտրանքը:

2023 թվականի հոկտեմբերի 7-ի պատերազմից հետո Թեհրանին մտահոգում է ռազմական գործողությունների աշխարհագրությունը Գազայից մինչեւ Պարսից ծոց հասցնելու Իսրայելի վարչապետ **Նեթանյահուի** կառավարության քաղաքականությունը, որի հետեւանքը կարող է լինել Իրանի ու Իսրայելի միջեւ համատարած պատերազմը: Այդ պատճառով էլ Իրանը ձգտում է իր գործողություններին «պատժիչ եւ կանխարգելիչ» բնույթ հաղորդել:

Թեհրանը հայտարարել է, որ ցանկություն չունի սրել իրավիճակը՝ խոստանալով, սակայն, Թել Ավիվի ռեւանշիստական քայլերին ավելի հուժկու հարվածներով արձագանքել:

Իսրայելի ռեւանշիստական գործողությունները չեն խրախուսվում Վաշինգտոնի կողմից: ԱՄՆ նախագահի **Բայդենի** կառավարությունը քաջ գիտակցում է, որ իսրայելցիները տեւական ժամանակ է, ինչ ձգտում են ԱՄՆ-ին ներքաշել Իրանի դեմ տարածաշրջանային լայնածավալ պատերազմի մեջ: Սա ավելի ակնհայտ դարձավ հատկապես Գազայի պատերազմի ընթացքում: Հորդանանում տեղակայված ԱՄՆ ռազմակայանին ուղղված հարձակումից հետո Իսրայելի լոբբիստական հոսանքներն ու աջակիցներն Իրանի դեմ արկածախնդրություն հրահրելու նպատակով զանգվածային լրատվամիջոցներում լայնածավալ քարոզչական արշավ էին սկսել:

Այդ էր պատճառը, որ Բայդենի կառավարությունը թե՛ Գազայի պատերազմից առաջ եւ թե՛ պատերազմի ընթացքում հստակ ցույց տվեց, որ Վաշինգտոնը չի պատրաստվում մտնել Իրանի դեմ ձեռնարկված խաղի մեջ, գիտակցելով, որ դրա հետեւանքը ԱՄՆ շահերի զոհաբերումն է հօգուտ Իսրայելի: Վաշինգտոնի այդ դիրքորոշումն ավելի հստակ արտահայտվեց ապրիլի 13-ին Իրանի պատժիչ գործողություններից հետո, երբ Սպիտակ տունը հրապարակեց ԱՄՆ նախագահ Բայդենի պաշտոնական դիրքորոշումն Իրանի դեմ հարձակումներին չմասնակցելու մասին:

# Մի երկու խոսք բրյուսելյան եռակողմ հանդիպման ու նաեւ... չերեփի մասին

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Ապրիլի 5-ի Փաշինյան-Բլինքեն-ֆոն դեր Լայեն բրյուսելյան հանդիպման մասին մեզանում կարծես թե ավելի շատ խոսվեց հանդիպումից առաջ, քան ասվեց ու վերլուծվեց դրանից հետո: Գուցե նաեւ այն պատճառով, որ այդտեղ ամեն ինչ բավական պարզ էր ու վերլուծելու բան շատ չկար էլ: Գնահատական-բնորոշումներ, մանավանդ ծայրահեղ, բոլոր դեպքերում տրվեցին: Ոմանք այն անգամ պատմական, շրջադարձային համարեցին, առանձին ասողներ էլ եղան նույնիսկ, թե մեր... շերեփն այս անգամ պողպատից էր: Ո՜վ հայի անբուժելի հավաս...

Զուտ կարծիքի կարգով նախ նկատենք, որ երբ մեզ հետ որեւէ արտաքին ուժի շփման, մեր նկատմամբ այդ ուժի որեւէ քայլի դեմ Ադրբեջանը կամ նրա ղեկավարը բողոքում են, հավանաբար նշանակում է, որ այդ որեւէ քայլն այս կամ այն չափով մեր օգտին է կամ գոնե մեզ օգուտ է: Հայաստան-ԱՄՆ-Եվրոմիություն հիշյալ բարձր մակարդակի հանդիպման առիթով **Ալիեւը** նախապես հայտարարել էր, թե այն ուղղված է բաժանարար գծերի ստեղծմանը եւ իր երկրի մեկուսացմանը: Նրա խոսքով՝ նման հանդիպումները հակասում են Ադրբեջանի եւ Անդրկովկասի մյուս երկրների միջեւ համագործակցությանը (այդ «համագործակցությունը» երեւի իրենց հաճախակի կրակահերթերն ու ագրեսիվ հռետորաբանությունն են): Ալիեւը, նաեւ, ԱՄՆ-ի ու Եվրոպայի գործընկերներին զգուշացրել էր, թե Հայաստանին աջակցելու, այն զորացնելու նրանց փորձերը կհանգեցնեն բացասական մեծ հետեւանքների:

Նորություն չէր ու բացատրելի էր նաեւ Ռուսաստանի ու նրա լրատվամիջոցների խանդոտ արձագանքը բրյուսելյան հանդիպմանը, որը նրանց կողմից բնորոշվեց իբրեւ մեր տարածաշրջանը Արեւմուտք-ՌԴ հակամարտության մեջ ներքաշելու, Ռուսաստանին Հայաստանից հեռացնելու եւ Հայաստանը դեպի... ուկրաինական ուղի մղելու փորձ:

Իսկ ըստ հրապարակված տեղեկատվության,- եթե մեկ նախադասությամբ կարճ ասենք,- այդ հանդիպմանը խոսվել է Հայաստանի տնտեսական, հումանիտար եւ ժողովրդավարական կայունության ամրապնդման նպատակով կողմերի համագործակցության մասին, «նախանշված բարեփոխումների» համար ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի կողմից մեր երկրին որոշակի ֆինանսական աջակցություն է խոստացվել:

Բնավ չթերագնահատելով այդ հանդիպման նշանակությունը եւ շնորհակալ լինելով մեզ մասնավորապես տնտեսության ոլորտում խոստացվող աջակցության համար, միեւնույն ժամանակ չենք կարող չնկատել հանդիպման հետ կապված որոշ մտահոգիչ հանգամանքներ:

Այն դեպքում, երբ թշնամական շարունակվող վտանգի պայմաններում մեզ համար առաջինն ու ամենահրատապը հիմա անվտանգության խնդիրն է, դրան վերաբերող ոչինչ չենք տեսնում հանդիպման արդյունքներով արված եռակողմ հայտարարությունում, բացի առաջին նախադասության մեջ գործածված «Հայաստանի ինքնիշխանություն, ... տարածքային ամբողջականություն» արարողակարգային-քաղաքավարական բառակապակցություններից: Ժամանակին թե՛ ԱՄՆ-ը, թե՛ Եվրոմիությունն իրենց կառույցներով կարող էին, բայց չփորձեցին զսպել Ադրբեջանի պատերազմական ագրեսիվ ոտնձգություններն ու վայրագ հանցագործությունները օրինական կերպով ինքնորոշված հայ Արցախի նկատմամբ: Փակեցին աչքերն ու ականջները Արցախի օգնության աղաղակների հանդեպ, երբ 120 հազար մարդ այնտեղ՝ սեփական հայրենիքում տառապում էր ադրբեջանական համարյա 10-ամսյա դաժան շրջափակման պայմաններում: Ամենաթողությունից ու անպատժելիությունից ավելի ու ավելի խրախուսվող ֆաշիստական վարչակարգն իր վերջին ահաբեկչական հարձակմամբ «ազատագրելով» եւ դատարկելով մենակ մնացած Արցախն այդ հողի իսկական տերերից, այժմ էլ իր շոշափուկներն ու հայացքն ուղղել է Հայաստանի արդեն ինքնիշխան տարածքի վրա: Որովհետեւ, հասկանո՞ւմ եք, Եվրոմիության համար, օրինակ, այդ բոլոր չարագործություններով հանդերձ, ժամանակին հենց տիկին **ֆոն դեր Լայենի** հայտարարությամբ, գազ ունեցող Ադրբեջանը «հուսալի գործընկեր է», «Եվրոմիության ամենակարեւոր էներգետիկ գործընկերը»... Հո չէ՞ր կարելի նրան նեղացնել:

Էլ չենք ասում նաեւ իրենց հարթակներում ժամանակին անցկացված բանակցությունների մասին, որոնց ուղղակի արդյունքն Արցախի հարցում, այսպես ասած, ադրբեջանական օրակարգի ավելի քան լիարժեք իրականացումն էր:

Հիմա ապրիլյան այս հանդիպման հրապարակված նախանշումներից մեկը խոստացվող աջակցությունն է «տեղահանվածների», «փախստականների» մարդասիրական կարիքները հոգալուն: Ոչ միայն չի ասվում՝ որտեղի՞ց, իրենց տնից-տեղից զրկված ի՞նչ տեղահանվածներ ու փախստականներ են նրանք, այլեւ խոսք չկա ընդհանուր հաշվով այդ 150 հազար մարդկանց քաղաքացիական, տարրական մարդկային իրավունքների մասին, որոնք բարբարոսաբար խախտվել են:

Իսկ տարրական դիվանագիտական էթիկայի կոպիտ խախտում եւ տվյալ պետության նկատմամբ առնվազն անհարգալից վերաբերմունք չէ՞ այն փաստը, որ մի պետության ղեկավարի հետ հանդիպելուց առաջ նախ հրավիրող ե՛ւ մեկը, ե՛ւ մյուսը զանգահարում են մեկ այլ, տվյալ դեպքում՝ մեզ թշնամի, մեր տարածքը մտած պետության ղեկավարին ու հավաստիացնում թե՝ գիտե՞ք, հանգիստ եղեք, այս հանդիպումը ձեր դեմ չէ, դուք մեզ համար կարեւոր եք...

Իհարկե չգիտենք՝ փակ դռների հետեւում, «կադրից դուրս», պրն Բլինքենը կամ տկն ֆոն դեր Լայենը նաեւ ուրիշ ինչ են խոսել Ալիեւի, մյուս կողմից էլ՝ **Նիկոլ Փաշինյանի** հետ, բայց տեղի ունեցած իրադարձությունների ու ներկա իրավիճակի այս ընդհանուր համապատկերում հուզող հարց է նաեւ այն, թե ըստ էության ի՞նչ են այս խոստացված աջակցությունները եւ դրանց դիմաց ի՞նչ են պահանջել ու պահանջելու մեզնից: Եթե իրոք պահանջում են: Շատ կուզենայինք այս պարագայում հավատալ ու լավատես լինել: Նաեւ որոշ կասկածներում սխալված լինել: Օրինակ՝ որ ինչպես նման թվացող որոշ այլ նախկին դեպքերում, մտքիդ ակամա գալիս է համեմատություն Հովհաննես Թումանյանի «Աղքատի պատիվը» պատմվածքի հետ... Ներողություն, իրավիճակները համեմատելի չեն ու բոլորովին տարբեր են, այնտեղ խնդիրն էլ անձնական-բարոյական է եւ երկու մարդու միջեւ է, այստեղ ազգի, պետության խնդիր է՝ ադրբեջանական ոտնձգությունների ֆոնին: Բայց մի կողմին արվող առաջարկությունը կարծես նման ուղղվածություն ունի: Այն է՝ եղբայր, ինչ եղել-եղել է, առ այս փողը, հաշտվիր... Ու այս դեպքում, նաեւ, գնա հետը լեզու գտիր:

Կամ՝ որ առավել կարեւոր մի նպատակը կամ թելադրանքը իրոք Ռուսաստանի հետ է կապված: Եվրոպական հանձնաժողովի նախագահը հանդիպումից հետո իր հրապարակային ելույթում քար գցեց այժմ առանց այն էլ լարված հայ-ռուսական հարաբերությունների կողմը, ասես այդտեղ կրքերն ավելի բորբոքելու համար ասելով. «Ողջունում եմ նաեւ Հայաստանի քայլերը՝ Ռուսաստանի դեմ պատժամիջոցների ռեժիմը պահպանելու ուղղությամբ... Դա նշանակում է, որ Եվրոմիությունը եւ Հայաստանը կիսում են միեւնույն արժեքներն ու շահերը»:

Մի խոսքով, հավաքական Արեւմուտքը մեր իրավունքներին ու անվտանգությանն աջակցելու խոստում չի տալիս, համենայն դեպս՝ հրապարակայնորեն: Առայժմ մեր պաշտոնական դաշնակից Ռուսաստանն իր ՀԱՊԿ-ով հանդերձ՝ նույնպես: Մեր իրավունքների ու անվտանգության ապահովումն, իհարկե, մե՛ր խնդիրն է: Որը լուծել կարողանալու համար, սակայն, մեզ խելամիտ համախմբումից ու ամրապնդման լարված ջանքերից բացի պետք են նաեւ դաշնակիցներ ու աջակիցներ: Այսինքն նախ արհեստավարժ ու ճիշտ, արդյունավետ աշխատանք բոլորի հետ: Նոր որակով շարունակվո՛ղ աշխատանք:

Ինչ մնում է մեր շերեփին, դրա մասին խոսելը, կարծում ենք, դեռ է՜, վաղ է:

Շերեփը գործիք է: Առայժմ գոնե կարողանանք մե՛նք ուրիշի ձեռքին շերեփ չդառնալ:

Դոկտ. ԱՐՇԱՒԻՐ ԿԷՕՆՃԵԱՆ
Մոնթրէալ, Գանատա

# Հայաստան թէ Սփիւռք՝ առաջնահերթութիւնը ազգային դիմադրական լծակներուն հզօրացումն է



Օրացոյցի անխախտելի օրինաչափութեան ընթացքով, ահա այս տարի եւս կը թեւակոխենք Մեծ Եղեռնի նշման Ապրիլեան օրերը: Այս անգամ անոր 109-րդ տարելիցը:

Ամէն տարի Կաղանդ, Ծնունդ կամ Զատիկ կանոնաւորութեամբ նշելու նման, նոյնպէս ալ հայ ժողովուրդը այս օրերուն՝ Ապրիլի 24-ին կամ անոր շուրջ, կ՚ոգեկոչէ Մեծ Եղեռնի զոհերուն յիշատակը: Եկեղեցական թէ քաղաքական տարբեր միջոցառումներով մէկ կողմէ կը ձգտինք յարգել այժմ սրբացած մէկուկէս միլիոն մեր նահատակներուն յիշատակը, իսկ միւս կողմէ ալ, դժբախտաբար, երթալով տկարացող փորձեր կը կատարենք արդարութիւն եւ հատուցում պահանջելու համար յանցագործ Թուրքիայէն եւ ամբողջ աշխարհէն՝ աւելի քան մէկ դար առաջ մեր ազգովին կրած անդարմանելի կորուստներուն համար:

Այս տարի սակայն, այս յօդուածը կը գրենք ահազանգ հնչեցնելու համար եւ ստորագծելու, թէ համաշխարհային քաղաքական կրկէսին վրայ այլեւս հայ ժողովուրդին համար տուեալները եւ տրամադրութիւնները անհամեմատօրէն աւելի լուրջ եւ մտահոգիչ են, քան եղած են երբեւիցէ, գրեթէ ամբողջ անցեալ մէկ դարուն ընթացքին:

Մինչ պարզապէս սովորութիւնը շարունակելով, արդէն իսկ ամէն կողմ կը կատարուին դասական կաղապարով Ապրիլեան նշումները, այս յօդուածով կ ուզենք առաւելագոյն ուժգնութեամբ ցնցել Հայաստանեան թէ Սփիւռքեան ղեկավար եւ պատասխանատու շրջանակները, յայտնելու համար, թէ այսօրուան պայմաններուն մէջ եթէ պարզապէս սահմանափակուինք եւ բաւարուինք սովորական այսպիսի նշումներով, իսկապէս լրջութեան պակաս մը ցուցաբերած պիտի ըլլանք մեր ազգային սուրբ Դատին, մեր բիւրաւոր նահատակներուն եւ մանաւանդ մեր հայրենիքի գոյութեան իսկ սպառնացող վտանգները զսպելու համար ունեցած մեր պարտականութեանց նկատմամբ:

Արդարեւ, բոլոր անոնց համար, որոնք անկողմնակալ եւ վերլուծողական սուր աչքով կը հետեւին հայ ժողովուրդին առնչուող ազգային քաղաքական ընթացիկ զարգացումներուն, ակնյայտ է, թէ վերջին շրջանին եւ յատկապէս վերջին տարուան ընթացքին, Հայաստանի թէ Սփիւռքի մէջ ազգային դիմադրողականութեան գործօնները արագընթաց կ երթան դէպի լուրջ տկարացում: Եթէ արտասովոր ջանքերով ու համազգային գիտակից ծրագրումով չկատարուին վերակազմակերպման լուրջ աշխատանքներ, դիմադրականութեան այդ տկարացումը անխուսափելիօրէն պիտի յանգի իսկական անդառնալի ազգային ընդհանուր ամլացման:

Այս իմաստով առաջին հերթին չափազանց մտահոգիչ է այսօր կացութիւնը նոյն ինքն Մայր հայրենիքին մէջ:

Ներքին թէ արտաքին ճակատներու վրայ տեղի ունեցող կարեւոր զարգացումները ամէն օր աւելի կը տկարացնեն, դժբախտաբար արտագաղթով և այլ պատճառներով, այսօր երկրին եւ ժողովուրդին ունեցած արդէն իսկ դիւրաբեկ՝ ազգային դիմադրականութիւնը:

Այս մտահոգիչ զարգացումներուն պատասխանատուութիւնը անխուսափելիօրէն եւ փաստօրէն առաջին հերթին կ՚իյնայ օրուան իշխանութեան ուսերուն: Այստեղ կ ուզենք ստորագծել, թէ այս նկատողութիւնը կը կատարենք բոլորովին անկախաբար որեւէ յատուկ անձի մը կամ կազմակերպութեան մը դէմ մրցակցական կամ այլ տեսակի պայքարի մը մասնակցելու կարճատես դիտաւորութենէն: Արդարեւ, Հայաստանի Հանրապետութեան՝ Մայր հայրենիքին՝ գոյութենական տագնապը այսօր շատ աւելի լուրջ է, քան մրցակցական կամ կողմնակցական որեւէ նկատում:

Քանի որ արդէն իսկ այս նիւթը կրկնակիօրէն արծարծած ենք թէ՛ մենք եւ թէ՛ ահազանգ հնչեցնող տարբեր աղբիւրներ, յիշեցման ձեւով, կարեւորագոյն քանի մը տուեալներն են միայն, որ պիտի թուարկենք:

Խօսելով ներքին ճակատին մասին, հայրենիքին ներքին կեանքին մէջ, բոլորովին անընդունելի եւ դատապարտելի են, թուրք-ազերի ակնյայտ ճնշումներուն տակ, բարձրագոյն մակարդակներու վրայ, իշխանութեանց կողմէ վերջերս առաջ քաշուող հակազգային առաջարկներու շարքը, որոնց կարգին՝ ազգային սրբագոյն խորհրդանշան Արարատ լեռը զինանշանէն վերցնելու առաջարկը, նոյնքան անընդունելի են դասագիրքերու մէջ ազգայնական աւանդական խորխտ արտայայտութիւնները վերացնելու, Սահմանադրութենէն եւ պաշտօնական այլ արտայայտութեանց միջոցներէն պահանջատիրական դասական դրսեւորումները վերացնելու առաջարկները, եւայլն:

Արտաքին ճակատին վրայ , նոյնքան եւ աւելի մտահոգիչ է Հայաստանին ներկայիս վարած խեղճացած, պարտուողական քաղաքականութիւնը:

Արդարեւ, իշխանութիւնը, խաղաղութիւն հետապնդելու թէև անվիճելիօրէն ազնիւ պատրուակով, գործնականին մէջ որդեգրած է իր ոխերիմ դրացիին տարածքային բոլոր պահանջներուն հնազանդօրէն եւ միակողմանի ենթարկուելու կործանիչ եւ մանաւանդ ապարդիւն քաղաքականութիւնը: Այս քաղաքականութեան մեծագոյն զոհը հանդիսացաւ՝ ամիսներ առաջ քանի մը ժամուան մէջ ամբողջ Արցախի կորուստը: Կործանիչ է այս քաղաքականութիւնը մանաւանդ, որովհետեւ ակնյայտ է, թէ ոխերիմ Ալիեւին պահանջները վերջ չունին: Աւելի ճիշդը՝ անոնց իսկական վերջը Հայաստանի Հանրապետութեան ամբողջական վերացումն է:

Յաջորդաբար, խոր մտահոգութեամբ պէտք է նշենք, թէ Հայաստանի արտաքին քաղաքականութեան նորագոյն անհեռատես եւ անպատրաստ նախաձեռնութիւնը հանդիսացաւ Ապրիլ 5-ին՝ Պրիւքսէլեան գագաթնաժողովին ցուցադրական մեծ բեմադրութիւնը: Անոր յաջորդող օրերուն, արդէն իսկ ամէն օր քիչ մը աւելի կը յայտնուին այդ ժողովէն ակնկալուած ենթադրեալ մեծ արդիւնքներուն ետին գոյութիւն ունեցող, ընդհակառակը, իսկապէս ծանր եւ մտահոգիչ հետեւանքները:

Արդարեւ, իշխանութիւնը ենթադրաբար այլապէս օգտակար Պրիւքսէլեան 180 աստիճան դէպի Արեւմուտք շրջադարձը կատարեց, ակնյայտօրէն առանց ինքզինք պատրաստած ըլլալու այդ շրջադարձէն բխելիք ռազմական, դիւանագիտական եւ տնտեսական լրջագոյն հետեւանքներուն: Թէ՛ Հայաստանի իշխանութիւնները եւ թէ՛ ժողովուրդը, դժբախտաբար արագօրէն պիտի անդրադառնան, թէ քանի մը հարիւր միլիոն տոլարներու օժանդակութիւնը եւ անոնց հետ Հայաստանին ի նպաստ Պրիւքսէլի մէջ շռայլուած գովաբանական արտայայտութիւններն ու խոստումները խաբկանք մը կրնան մնալ միայն, քանի որ նոյն ժամանակ, ռազմական եւ ռազմագիտական աջակցութեան եւ ուղիղ պաշտպանութեան հաւաստիք չտրուեցաւ Հայաստանին:

Ահա այս բոլորը նկատի առնելով, Ապրիլեան լրջագոյն այս խոկումներուն առիթով, ստիպողաբար կը վերյիշեցնենք ոչ միայն Հայաստանի իշխանութեանց, այլ նաեւ ընդդիմութեան, մտաւորական, կուսակցական եւ այլ պատասխանատու շրջանակներուն, ինչպէս նաեւ ամբողջ ժողովուրդին, թէ այսօր աւելի քան երբեք բոլոր միւս նախաձեռնութիւններէն առաջ, Հայաստանը պէտք է գերագոյն առաջնահերթութիւն նկատէ մէկ կողմէ իր բոլոր կարող ուժերու մասնակցութեամբ մշակել ազգային փրկութեան միացեալ քաղաքականութիւն մը, եւ, միւս կողմէ, ստեղծէ Հայաստանի սահմաններուն պաշտպանութեան համար ռազմական գերարդիական անխոցելի բանակ մը և համակարգ մը:

Այս երկու ազդակներու հզօրացումը ապահովելէն ետքն է միայն, պատերազմի բարձրագոյն մակարդակով պատրաստ ըլլալէն ետքն է միայն, որ Հայաստանը արդարօրէն կրնայ ինքզինքին թոյլ տալ ձեռնարկելու դիւանագիտական անկաշկանդ եւ յախուռն տարբեր գործառնութեանց:

Ապրիլեան մեր խոկումներուն միւս առանցքը կը վերաբերի հայ աշխարհի միւս բեւեռին, որուն մակերեսային հեշտութեամբ կ՚ակնարկենք որպէս Սփիւռք: Այս մէկ բառով ակնարկուած մեր ժողովուրդին բազմամիլիոն մեծագոյն հատուածը, յաճախ կը մոռնանք, թէ տառացիօրէն տարածուած է մոլորակին գրեթէ ամբողջ մակերեսին վրայ: Հետեւաբար բոլորովին անիրատեսական է, երբ յաճախ պատասխանատու շրջանակներու մէջ եւ կարեւոր դիրքերու վրայ գտնուող անհատներ կը խօսին «Սփիւռքի կեցուածքին», «Սփիւռքի խորհածին» կամ «Սփիւռքէն ակնկալուածին» մասին որպէս կարեւոր ազգային միակտուր գործօն, որ պարտի տարբեր ձեւերով օժանդակել համազգային պահանջներու իրականացման:

Թանկագին հայրենակիցներ, Ապրիլեան այս օրերուն ժամանակն է որ Սփիւռքի մէջ ի վերջոյ լրջութեամբ եւ իրատեսութեամբ որդեգրենք այնպիսի կեցուածք մը, որ Սփիւռքը դառնայ իսկական կարեւոր ազգային գործօն, որ կարող ըլլայ իր մեծ նպաստը բերելու հայրենիքին եւ ազգին գոյատեւման պայքարին:

Կրկնութիւն ըլլալով վերահաստատենք, թէ բազմամիլիոն անհատներով գոյացած Սփիւռքը իսկապէս հարուստ է մտաւորական ու նիւթական բարձր կարողութեան տէր եւ բացառիկ յաջողութեանց հասած անհատներով: Մանաւանդ՝ Հայ Սփիւռքը աւելի քան մէկ ամբողջ դար իր գոյութեան տարիներուն ընթացքին, բարեբախտաբար կարողացած է իր մէջ ստեղծել տարբեր ուղղութիւններ ունեցող քաղաքական, մշակութային, բարեսիրական եւ եկեղեցական կարեւոր կազմակերպութիւններ, որոնց շնորհիւ է միայն, որ ան իրաւունք ստացած է կոչուելու «Հայ Սփիւռք»: Սակայն Սփիւռքի տարբեր այդ մասնիկներուն միջեւ եթէ կան տեղ-տեղ աւելի կամ պակաս համադրողական կապեր, իր ամբողջութեան մէջ ան կը մնայ մեծ հաշուով առաւելաբար ցրուած եւ հետեւաբար նաեւ համաշխարհային բեմին վրայ շատ փոքր կարողականութիւն ցուցաբերող համախմբում մը:

Հայ Սփիւռքին այս անկարողութեան կարծր փաստը խոր յուսախաբութեամբ ապրեցանք մանաւանդ անցնող տարիներուն եւ ամիսներուն ընթացքին: Մինչ Հայաստան եւ Արցախ, ամբողջ քաղաքակիրթ կոչուած աշխարհին անտարբեր աչքերուն տակ կ՚ապրէին մեր պատմութեան ամէնաողբերգական շրջաններէն մէկը, այնքան կարեւոր նկատուած Սփիւռքը չկարողացաւ դոյզն իսկ ազդեցութիւն ցուցաբերել, թեթեւցնելու եւ նոյնիսկ առաջքը առնելու համար այդ ողբերգութեան: Այս գերկարեւոր նիւթը ամիսներ առաջ շեշտուած կերպով արծարծեցինք այս էջերուն մէջ՝ կոչ ուղղելով Սփիւռքի բոլոր ղեկավար շրջանակներուն, քաջութիւն եւ համարձակութիւն ցոյց տալ նախաձեռնելու համար համադրուած սփիւռքահայ քաղաքական միացեալ կառոյցի մը ստեղծումը, որ օժտուի նիւթական, մտաւորական, օրինական եւ այլ, այսօր դիւրաւ մատչելի, բոլոր ազդակներով:

Վերջապէս, անշուշտ այս բոլորին վերջնական նպատակն է, որ Սփիւռքի այս կառոյցը, գործակցաբար մեր վերնը յիշած Հայաստանի համապատասխան մարմիններուն հետ, կազմէ **ՀԶՕՐ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԴԻՄԱԴՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ** մը:

Այսուհետեւ այդպիսի տոկուն համակարգ մը անհրաժեշտ է, որպէսզի լրատուական, դիւանագիտական, տնտեսական եւ ռազմական գետնի վրայ Հայաստանը կարենայ յաջողութեամբ դիմադրել յաջորդական տարիներուն ընթացքին իր դէմ կատարուելիք, նախատեսելի բոլոր յարձակումներուն:

Ապրիլեան խոհերու ծիրին մէջ ընդհանուր այս ակնարկին այս եզրակացութիւնը անխուսափելիօրէն շատ պարզ եւ տրամաբանական է: Սակայն անշուշտ գիտակից ենք, թէ անոր գործադրութիւնը իրատեսօրէն աննախադէպ ըլլալով՝ նոյնքան ալ շատ դժուար է:

Սակայն, ինչպէս շեշտեցինք այս յօդուածին սկզբնաւորութեան, եթէ Հայ Աշխարհը բաւականանայ այս օրերուն կատարուող Ապրիլեան դասական նշումներով, այսօրուան իշխանութիւնը, ընդդիմութիւնը, կուսակցական, եկեղեցական կամ մտաւորական ամբողջ ղեկավարութիւնը հաւաքաբար պատասխանատու պիտի նկատուին, մօտ թէ աւելի հեռաւոր ապագային սպասուած գոյութենական՝ ողբերգական տագնապներուն բոլոր տխուր հետեւանքներուն համար:

Հայրենիքի թէ Սփիւռքի մէջ ղեկավարութեան յաւակնութիւն ունեցողները, բոլորը, պարտին գերագոյն ճիգերով վար առնել նախատեսելի բոլոր պատնէշները, որպէսզի եթէ ոչ կատարելութեամբ, սակայն գոնէ մեծ չափով յաջողութեամբ դիմագրաւենք այս մեծ մարտահրաւէրը, ապահովելու համար հայ պետականութեան արժանապատիւ վերապրումը, եւ մեր պարտքն ու յարգանքը իսկապէս կատարած ըլլանք մեր սրբացած բիւրաւոր նահատակներուն յիշատակին:

## ՉԱՅԼԶ ՖՐԵՅԶՐ

***Հոդվածի հեղինակ, հրեա հոր եւ քրիստոնյա մոր զավակ Չայլզ Ֆրեյզրը անգլիկան եկեղեցու առաջնորդական տեղապահ է, նաեւ քարոզիչ եւ լրագրող, որը թղթակցում է «Guardian» թերթին եւ «BBC»-ին:***

# Ինչո՞ւ Իսրայելը պետք է հիմա ճանաչի Հայոց ցեղասպանությունը



Անցյալ տարվա սեպտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում Իսրայելի Նեգեւ անապատի Օվդա զինվորական ավիացիայի հենակետից մի քանի ինքնաթիռներ թռիչք կատարեցին դեպի Ադրբեջան՝ փոխադրելով իսրայելական զինարտադրության տեխնոլոգիայի ամենաարդիական տեսակի զինամթերք, որը ներառում էր նաեւ հարձակողական դրոններ (ԱԹՍ-եր): Մի քանի օր անց ադրբեջանական բանակը ավերիչ հարձակում կատարեց Լեռնային Ղարաբաղի հայկական անկլավի վրա, ստիպելով տեղի ամբողջ բնակչությանը դուրս գալ իր բնօրրանից եւ ապա քարուքանդ անելով այնտեղ գտնվող ճարտարապետական պատմական կառույցները, ճիշտ այն ձեւով, որ իսլամական պետությունն (ISIS) էր քանդել Պալմիրան: Ավելի քան 100,000 փախստականներ ապաստան գտան Հայաստանում:

Ռազմամթերքի առք ու վաճառքով զբաղվող մասնագետների հաշվարկներով ադրբեջանական բանակի օգտագործած զինամթերքի 70 տոկոսը այն խմբաքանակից էր, որ Իսրայելն էր վաճառել Ադրբեջանին: Անցյալում Հայաստանը Իսրայելին մեղադրել էր ոչ միայն զինամթերքի մատակարարման, այլեւ դրանց օգտագործման համար:

Հետաքրքրական է, որ Իսրայելի օժանդակությամբ Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի ձեռք բերած հաղթանակը ողջունողների թվում էր նաեւ Համասը: «Մենք շնորհավորում ենք մարտերում Ադրբեջանի հաղթանակը եւ օկուպացված տարածքների վերագրավումը», ասված էր Համասի 2020-ի խոսնակներից մեկի ելույթում: Մյուս ողջունողը Թուրքիայի վարչապետ **Ռեջեփ Թայիփ Էրդողանն** էր, որն անցյալ սեպտեմբերին ասաց. «Մենք աջակցում ենք այն ջանքերին, որ գործադրում է Ադրբեջանը, որի հետ մենք գործակցում ենք մեկ ազգ, երկու պետություն սկզբունքով»:

Թուրքիայի եւ Ադրբեջանի արանքում գտնվող հայկական պետությունը տառապում է այդ երկուսի հետապնդած պանթուրքիզմի մոլուցքով, որ վերականգնվել է հետխորհրդային տարիներին, նպատակ ունենալով միավորել թյուրքական բոլոր ազգություններին: Բացի այդ, ռուսներն էլ վշտացած են Հայաստանից, որը նոր եւ ավելի վստահելի դաշնակիցներ որոնելու ճանապարհին փորձում է դեպի Արեւմուտք եւ Եվրոմիություն շրջադարձ կատարել: Մոսկվան կարող է Հայաստանին պարտադրել Ուկրաինայի օրինակը, ինչպես վերջերս քողարկված ակնարկեց Ռուսաստանի արտգործնախարարության խոսնակուհին: Հայաստանը հուսահատված է եւ բարեկամների խիստ կարիքն ունի:

Երեւութապես, Իսրայելն ու Հայաստանը ընդհանուր շատ բան ունեն: Երկուսն էլ վաղեմի հարուստ մշակույթով փոքր երկրներ են՝ շրջապատված թշնամի հարեւաններով: Երկուսն էլ ձեւավորված են 20-րդ դարի տրավմատիկ ցեղասպանությունների դառն փորձությունների հետեւանքում: Եվ երկուսն էլ ունեն մեծ, լայնատարած եւ գլոբալ նշանակությամբ սփյուռք: Մեկը դավանում է քրիստոնեականությունը (իրականում աշխարհի ամենահին քրիստոնյա պետությունն է), մյուսը՝ հրեականությունը: Երկուսն էլ ծայրահեղական իսլամիզմի թիրախի տակ են գտնվում:

Կարեւոր է նշել, որ Համասը ինչպես Գազան, անպես էլ Լեռնային Ղարաբաղը համարում է «գրավյալ տարածքներ», որոնք պետք է ազատագրվեն: Ուստի հարց է ծագում, թե ինչո՞ւ է այդ դեպքում Իսրայելը զինում Ադրբեջանին եւ հրճվանք պատճառում Համասին եւ Էրդողանին:

Իսրայելցիների երկմտությունը Հայաստանի վերաբերյալ վերջերս հանդուգն շրջադարձ կատարեց, երբ մարտի 9-ին **Բենիամին Նեթանյահուն** սոցցանցում հետեւյալ գրառումն արեց. «Իսրայելը, որ միջազգային իրավունքի պաշտպան երկրներից է, մերժում է վարչապետ Էրդողանի բարոյականության վերաբերյալ անհեթեթ քարոզչությունները, որը պաշտպանում է Համասի մարդասպաններին եւ բռնաբարողներին, ժխտում է Հայոց ցեղասպանությունը, իր երկրում կոտորում է քրդերին եւ հավակնում է վարչակարգի ընդդիմադիրներին ու լրագրողներին բանտարկելու եւ վերացնելու գործում աշխարհի ռեկորդակիրը դառնալ»: Բիբին (այսինքն՝ Նեթանյահուն,- **Հ.Ծ.**) ճիշտ է, անկասկած: Հայերի ցեղասպանությունը (ի դեպ՝ առաջին ցեղասպանությունը 20-րդ դարի) պետական քաղաքականություն է Թուրքիայում եւ էթնիկապես թյուրքական բնակչությամբ Ադրբեջանում: Խնդիրն այն է, սակայն, որ Իսրայելն էլ մինչ օրս պաշտոնապես չի ճանաչել կատարվածը:

Քրիստոնյա հայերը հազարավոր տարիներ ապրել էին այն տարածքում, որ մենք այժմ ճանաչում ենք որպես Արեւելյան Թուրքիա: Սակայն, Առաջին աշխարհամարտի ընթացքում նրանցից ավելի քան մեկ միլիոնը հետեւողականորեն կոտորվեց Օսմանյան իշխանությունների կողմից: Լեռնային Ղարաբաղում վերջերս կատարված իրադարձությունները դարձյալ հրապարակ են հանել այս պատմական տրավման:

Այս առնչությամբ թուրքերի դիրքորոշումն այն է, որ հայերի մահվան քարավանները մարտավարական տեղահանություններ էին պարզապես՝ ճնշելու համար հնարավոր ապստամբությունը, որ նրանք պատրաստվում էին իրականացնել Օսմանյան կայսրության ամենախոցելի ժամանակաշրջանում: Բայց իրականում ոչ մի ապստամբություն էլ չկար: Դա իսկական եւ կատարյալ էթնիկական զտում էր: 1939 թվականի օգոստոսի 2-ին, նախքան Լեհաստան ներխուժելը, Հիտլերը, ըստ լուրերի, ասել էր, որ ոչ ոք չէր արձագանքելու Արեւելյան Եվրոպայում Լեյբենշրոում (ապրելու տարածք) ստեղծելու իր ծրագրին, որովհետեւ «ո՞վ է այսօր հիշում հայերի կոտորածը»: Այո, ո՞վ իսկապես:

Նեթանյահուի արտահայտության կեղծավորությունը այն է սակայն, որ հենց ինքն է եղել Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խոչընդոտողը: 2018-ին **Յաիր Լապիդը** գրել էր. «Ժամանակն է վերջ տալ Էրդողանի առաջ քծնելուն: Ժամանակն է կատարել բարոյական ճիշտ քայլը եւ ճանաչել հայ ժողովրդի Ցեղասպանությունը»: Ամեն տարի Քնեսեթում կոչ է արվում քննարկելու այս հարցը եւ ամեն տարի իշխող կառավարությունների կողմից այն լռեցվում է: Լուրջ խնդիրներ կան: Հրեական որոշ շրջանակների համոզմամբ այդ ճանաչումը կարող է թուլացնել Հոլոքոսթի հասկացությունը որպես եզակի սարսափի: Փաստը, որ Հայոց ցեղասպանության պաշտոնական հիշատակության օրը՝ ապրիլի 24-ը նշվում է «Յոմ ՀաՇոայի» օրերին զուգահեռ, առավել շեշտադրում է այս մտահոգությունը: Իսրայելը շատ ավելի լուրջ խնդիրներ ունի ներկայիս, բայց Լապիդը ճիշտ է՝ ասելով, որ անհրաժեշտ է ճիշտ քայլ կատարել Հայաստանի նկատմամբ: Խնդիրն այն է, սակայն, որ Իսրայելը Ադրբեջանից է ստանում երկրին անհրաժեշտ նավթի մոտ 40 տոկոսը, եւ երկու երկրները ռազմավարական դաշնակիցներ են ընդդեմ Իրանի: Բայց Համասի կողմից, թեկուզ անուղղակի, ողջույնի խոսքերը հօգուտ Արդբեջանի պետք է որ Երուսաղեմին հուշեն վերանայելու Իսրայելի արտաքին քաղաքականությունը Կովկասում:

Հույս հայտնենք, որ Նեթանյահուի գրառումը վերաբերմունքի փոփոխության սկիզբը կհանդիսանա:

**Անգլերեն բնագրից թարգմանեց՝**
**ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**

# Ընդդիմությունը երրորդ անգամ փողոց դուրս կգա

Դաշնակցությունն այս տարի եւս ջահերով երթ կիրականացնի: Ապրիլի 23-ին Ծիծեռնակաբերդի բարձունքում կլինի ընդդիմադիր ամբողջ էլիտան: «**Ազգ**»-ին հասած տեղեկություններով՝ այդ օրը խորհրդարանական ընդդիմությունը կհայտարարի փողոց դուրս գալու եւ «Փաշինյանի իշխանությունից ազատվելու մասին»:

«Գցել-բռնել են, որ ընդդիմադրի բարձր կոչումը չկորցնելու եւ մարդկանց արդարացի բողոք-հարցը՝ ո՞ւր է ընդդիմությունը, արդարացնելու համար, որոշել են հերթական անգամ հայտարարել «հայրենիքի փրկության» շարժման մասին»,- ասաց մեր զրուցակիցներից մեկը:

«Ո՞վ է գլխավորելու շարժումը». հարցրեցինք: «Գրեթե ոչինչ չի փոխվել դեմքերի ու շարժումը գլխավորելու մասով: ՀՅԴ գերագույն մարմնի ներկայացուցիչ, ԱԺ պատգամավոր Իշխան Սաղաթելյանն է Ծիծեռնակաբերդից հայտարարելու փողոցի շարժման մասին: Եվ, ենթադրելի է, որ նա էլ կգլխավորի շարժումը»,- մանրամասնեց «**Ազգ**»-ի աղբյուրը:

Հարցին՝ ստացվում է՝ անգամ սցենարն ու լոզունգնե՞րն են նույնը լինելու, մեր զրուցակիցն արձագանքեց. «Դա չեմ կարող ասել, բայց ընդդիմության ներսում էլ կան քննադատներ, որ լիդերներին հորդորում են՝ մարդկանց հերթական անգամ փողոց չհանել, հետո հանդարտեցնել ու տուն ուղարկել»:

**ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ**

# Հայոց ցեղասպանության անվերականգնելին նաեւ այն է, որ ...

⇨1 Հետո երկու վերապրողները մի զավակ են ունեցել՝ **Ռուբենին**, որ Գեորգի նման զորակոչվել է, Երկրորդ համաշխարհայինից չի վերադարձել: Հոգեբանների կարծիքով, վերապրողների մեջ նկատելի է ապստամբելու, ըմբոստանալու, հաղթանակ կերտելու ոգին: Գեղեցկուհի մոր ողջակիզումը, ընտանիքի 7 անդամների ցեղասպանվելու միտքը պապիս մղել են զենք վերցնել եւ 1941-ին Գյումրիից կամավոր մեկնել ռազմաճակատ, երբ վարկած է շրջանառվել, որ Թուրքիան սպասում է իր վերջնական նպատակի իրագործմանը:

Մայրս պատմում էր, որ իր պապի աչքերում անանց մի տխրություն կար, անհատակ մեծ վիշտ, որ օրըստօրե խորանում էր՝ վերապրող որդին, իր կրտսեր որդին չեն վերադարձել պատերազմից... Մայրս պատմում էր, որ Հայոց ցեղասպանության մասին տանը եւ տներում չէին խոսում. Երբ տրավման մեծ է, փորձում ես լռությամբ պաշտպանել ընտանիքդ: Այդուհանդերձ նա գիտեր, որ իր մեծ մայրը գեղեցիկ կին է եղել, թուրք(եր)ի առաջարկը մերժել է, եւ իր նման այլ կանանց հետ նրան էլ թուրքերը ողջակիզել են:

Մեծ մեծ մայրիկիս ո՛չ անունը գիտեմ, ո՛չ էլ օրիորդական ազգանունը, լուսանկար էլ չի եղել... բայց բանավոր փոխանցված այս հիշողությունը կրում եմ իմ մեջ՝ որպես անկորնչելի ժառանգություն:

Ապրումներս նկարագրող որեւէ բառ չեմ գտնում, երբ գերմանացիներն իրենց գերդաստանի ծառն են ներկայացնում՝ հաճախ մի քանի դարի սերունդներ, անուններ ամփոփող... իմ գերդաստանի ծառի ամբողջական պատկերն ինչպե՞ս հավաքեմ, երբ բանավոր փոխանցված հիշողությունից զատ որեւէ գրավոր հիշատակություն չունեմ, եւ ապրիլի 24-ին ես հիշատակի 7 անանուն մոմ եմ վառում՝ վերապրող պապիս թողած թանկ հիշեցումը պահպանելով, աղոթում եմ այդ յոթ մարդու համար, նրանց հետ խոսում եմ, նրանց տեսնում եմ՝ Մատենադարանում պահվող միջնադարյան ձեռագրերից ինձ հարազատ կերպարանքով կանգնում են իմ առջեւ, նրանց ձայնը լսում եմ, երբ զգուշացնում են, թե թուրքի հետ, ոճիրը ուրացողի հետ բարեկամություն չի կարող լինել...

Ցյուրիխի համալսարանի պրոֆեսոր նեյրոէպիգենետիկ **Իզաբելլե Մանզույը** (Isabelle Mansuy), որ 20 տարի ի վեր գիտափորձերով հետազոտում է տրավմա ունեցած մկներին եւ դրանց ձագերին, անցյալ տարի հաղորդեց, թե ապացուցելի է, որ տրավման կարող է մինչեւ հինգ սերունդ փոխանցվել:

Ես՝ Հայոց ցեղասպանության ժամանակ ողջակիզված մեծ մեծ մայրիկիս, նրա որդու՝ վերապրող պապիս, մորիցս հետո երրորդ ժառանգն եմ, որ հիշողության տրավման կրում եմ:

Չորրորդ սերունդը՝ իմ դուստրերը գիտեն եւ այսօր Դյուսսելդորֆի համալսարանում պատմում են իմ պապի, իմ Մեծ մեծ մայրիկի պատմությունը: Նրանք պատմում են նաեւ իրենց հայրական կողմի՝ ադանացի մեծ մայրիկի՝ **Արաքսիի** պատմությունը, որ բազմանդամ գերդաստանի միակ փրկված մարդն էր: «Բազմանդամ գերդաստան» բառակապակցությունը ո՛չ անուն, ո՛չ թիվ չի փրկել, ողբերգության չափն ու տառապանքն է խորացրել, որ ոճրագործի ուրացմամբ տիեզերաչափ է դառնում: Երբեւիցե որեւէ գերմանացի (Հայոց ցեղասպանության մեղսակիցների ժառանգները), երբ լսել է մեր անանուն պատմությունները, մեզ չի վիրավորել, կասկած չի հարուցել դրա իսկությանը՝ եթե անունը չգիտես, ընտանիքդ զոհերի հստակ քանակը, տեղավայրերը, միգուցե... ազատես քեզ (եւ՝ մեզ ու աշխարհը) այդ մեծ տառապանքից՝ հիշողության բեռից...

Հիշողություն ունենալը նախ առողջություն է, դրա գիտակցումը՝ մեծ պարտք եւ պատասխանատվություն:

Մարդ մնալու, բարոյականությունն ընտրելու այլընտրանք կա՞...

***Լուսանկարում՝*** *Բեյրութահայ նկարիչ, Հայոց ցեղասպանության վերապրող Փոլ Կիրակոսյան «Անվերնագիր» գործը:*

ԲԱԲԿԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

**Կովկասագետ
Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոն**

# Տարածաշրջանում՝ Հայաստանի շուրջ վարվող քաղաքականության հետեւանքները

Անցնող ամիսը տարածաշրջանում նշանավորվում է սրընթաց զարգացումներով, որոնք ի հայտ բերեցին Հայաստանի վարած արտաքին քաղաքականության որդեգրած ուղեգիծը: Անդրադառնալով հայ-ադրբեջանական հարաբերություններին՝ կարեւոր ենք համարում ընդգծել, որ այսպես կոչված «խաղաղության օրակարգը» եւս մեկ անգամ ապացուցեց իր անիրատեսական ու կործանարար հեռանկարները: Ադրբեջանը հանդես գալով հաղթողի դիրքից, նոր պահանջներ է ներկայացնում, պահանջելով Տավուշի մարզի չորս գյուղեր, որոնք ձեւավորվել են դեռեւս խորհրդային տարիներին: Անառարկելի է այն փաստը, որ այդ տարածքները դարեր ի վեր եղել են հայկական եւ այսպես կոչված ապօրինաբար «պատմական ադրբեջանական» են ներկայացվել ԽՍՀՄ տարիներից սկսած: Իրականում այդ գյուղերը եւ նրանց պատկանելության հարցը վիճարկվել է 1918-1920 թվականներից, երբ քննարկվում էր նաեւ Արցախի, Սյունիքի եւ Նախիջեւանի հարցը:

Ադրբեջանական քաղաքականությունը, որն իրականացվում է Հայաստանի նկատմամբ, նպատակ ունի հետագա բանակցային գործընթացում էլ ավելի թուլացնել հայկական դիրքերը, ստեղծել պատերազմի վտանգ եւ բարոյահոգեբանորեն ճնշում գործադրել հայ հասարակության վրա: Այս ամենին զուգահեռ՝ Բաքուն փորձում է քաղել առավելագույնը եւ սահմանների դեմարկացիայի եւ դելիմիտացիայի արդյունքում բարենպաստ իրավիճակում հայտնվել: Հայաստանը գտնվելով անբարենպաստ աշխարհաքաղաքական իրավիճակում, ապավինում է Արեւմուտքի, մասնավորապես՝ Ֆրանսիայի արտաքին քաղաքական օժանդակությանը: Եվրադիտորդները իրենց ներկայությամբ սահմանին, հայ հասարակական-քաղաքական շրջանում ձեւավորել են երկբեւեռ տեսակետներ: Մի հատվածը, որն ռուսական քաղաքական հարաբերությունների ամրապնդման եւ զարգացման կողմնակիցն է, գտնում է, որ նրանց ներկայությունը վատթարացրել է հայ-ռուսական առանց այդ էլ բարդ հարաբերությունները, մյուս հատվածը, որը հակառուսական քաղաքականության ուղեծրում է, ընդգծում է դիտորդների ավելացման եւ լծակների դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը: Այս հարցում, եթե վերլուծենք փաստերը, ապա պետք է նկատենք, որ հայ-ռուսական հարաբերությունները ապրում են ամենաբարդ ժամանակները նորանկախ Հայաստանի պատմության մեջ: Այո՛, Ռուսաստանի հետ կան բազմաթիվ չլուծված հարցեր, բայց եթե հակիրճ պատասխանենք թե հետագայում ինչպիսի քաղաքականություն պետք է վարել հարցին, անհրաժեշտ կլինի հղում անել 1920 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների հայ-ռուսական երկկողմ հարաբերությունների պատմությանը եւ հետեւանքներին: Միանշանակ է նաեւ, որ ՀԱՊԿ-ը չի իրականացնում իր առջեւ դրված դաշնակցային պարտավորությունները եւ Հայաստանը պարտավոր է դիվերսիֆիկացնել իր անվտանգային միջավայրը, բայց ոչ իր ավանդական դաշնակցի հաշվին: Այսպիսի վարվող քաղաքականությունը ժամանակի հրամայականն է, քանզի տարածաշրջանը գտնվում է անկայուն, վիճարկված եւ գերտերությունների բախման թատերաբեմի վերածվելու վտանգի տակ:

Կարեւոր ենք համարում ընդգծել Հայաստանի հարավային հարեւան Իրանի դիրքորոշումը հայ-ադրբեջանական հարաբերությունների վերաբերյալ: Իրանը հստակ ընդգծել է իր տարածաշրջանային շահերի կարմիր գծերը եւ դրանց հատման հետեւանքները:




Օրերս Հայաստում ԻԻՀ դեսպանը պատասխանելով Հայաստանի տարածքային ամբողջականության խախտման ու հետագա հնարավոր էսկալացիայի եւ Իրանի դիրքորոշման վերաբերյալ հարցին, հայտնեց, թե Իրանը որեւէ պարագայում անթույլատրելի է համարում Հայաստանի տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության վիճարկումը, լինի այն Սյունիքի մարզում թե Տավուշում: Այս ուղերձը հստակ ընդգծում է Իրանի դիրքորոշումը Հայաստանի եւ հայ-իրանական երկկողմ, բարիդրացիական հարաբերությունների համատեքստում:

Մյուս կարեւոր ուղերձը իրանական կողմից, Հայաստան-Արեւմուտք համագործակցության զարգացման հեռանկարներին է վերաբերում, ըստ որի՝ դեսպանը նշեց, որ իրանական կողմը ստացել է հստակ ազդակներ, որ դրանք չեն խարխլի հայ-իրանական բարեկամական եւ գործընկերային հարաբերությունները: Իրանի դիրքորոշումը 3+3 ձեւաչափի գործարկման վերաբերյալ մնում է անփոփոխ:

Վերջին օրերին իրանա-իսրայելական սրընթաց լարվածությունը կարող է բերել տարածաշրջանային նոր զարգացումների: Հայաստանը փորձում է բազմաշերտ հարաբերություններ ձեւավորել իր երկու բարեկամ հարեւանների հետ: Այս համատեքստում դինամիկ զարգանում են հայ-վրացական հարաբերությունները, որոնք արդեն ռազմավարական բնույթ են կրում: Վրաստանի վարչապետի այցը Հայաստան միտված էր նոր համագործակցային եզրեր գտնելուն եւ եղած փոխգործակցությունը ամրապնդելուն: Վրաց քաղաքագետները ընդգծում են, որ հայ-վրացական հարաբերությունները եթե համարվում են ռազմավարական, ապա պետք է հստակ օրակարգ ձեւավորվի: Այս ամենը ենթադրում է,որ Հայաստանը պետք է հստակեցնի իր արտաքին քաղաքական ուղեգիծը՝ Եվրամիությո՞ւն, թե՞ Ռուսաստան (ԵԱՏՄ,ՀԱՊԿ):

Ավելորդ չէ նկատել, որ Վրաստանը բավականին բալանսավորված քաղաքականություն է վարում ՌԴ-ի հետ: Վրաստանի դերը հսկայական է Հայաստանի արտաքին առեւտրի եւ համաշխարհային շուկաներ ներթափանցելու առումով: Վրաստանը ինքնին Հայաստանի միջոցով փորձում է թոթափել թուրք-ադրբեջանական տանդեմի ազդեցությունը իր երկրի վրա, հատկապես տնտեսական առումով: Այնուհանդերձ, հայ-վրացական հարաբերությունները այս պահին ինտենսիվ զարգացման միտումներ են ցուցաբերում: Օրերս ԵՊՀ-ում բացվեց նաեւ Վրացագիտության կենտրոնը, որի գործունեությունը նպատակ է հետապնդում զարգացնելու եւ ամրապնդելու գիտակրթական ու գիտահետազոտական կապերը ի շահ երկու երկրների ու ժողովուրդների:

Ամփոփելով ընդգծենք, որ տարածաշրջանում որեւէ պահի իրավիճակը կարող է գլխիվայր փոխվել, իսկ Հայաստանի շուրջ իրավիճակը բարենպաստներից չէ: Այս փորձությունները պատվով հաղթահարելու համար պետք է ունենալ համախմբվածություն եւ համարձակություն, վարել հավասարակշռված եւ ճկուն քաղաքականություն Արեւմուտք եւ ՌԴ փոխհարաբերություններում, որ բացակայում է մեզ համար ամենավճռական պահերին:

# Հրեն՝ բաց դաշտում կովն արածում է առանց հիշողությունների

⇨1

Առավել եւս՝ եթե այդ ծրագրերում կան Հայոց ցեղասպանության ուրացման պարտադրանք, միգրանտների կասկածելի շերտեր լցնելով եւ մեր երկրի դեմոգրաֆիական պատկերը փոխելով՝ ազգային խնդիրների սրությունը թուլացնելու նախագիծ-պարտադրանք (հնդիկներ, Մեծ Բրիտանիայում ապաստան հայցող չինացիներ, պակիստանցիներ եւ այլուայլազգիներ), ապա ոչ մի իշխանություն իրավունք չունի դա ստանձնելու, իրավունք չունի նպատակները թաքցնելով եւ սվաղելով՝ ուրիշների հակահայկական նկրտումներին տրվելու: Եթե անգամ մարդու սեփական զավակը սխալվի, զիջի տարբեր պարտադրանքներին, կոնկրետ դեպքում՝ տոհմական ձիերին երկիր բերելուն չդիմակայի, ապա նրան պետք է սթափեցնել հայրական կամ մայրական ապտակով:

Մենակ ի՞նչ արժե ցեղասպանության իրողությունը կասկածի տակ դնելուն նպաստելու **Անդրանիկ Քոչարյանի** սկսած այն խոսակցությունը , թե պետք է մեկ առ մեկ ճշտել Հայոց ցեղասպանության ժամանակ մահացածների ազգանունները եւ ցուցակագրել, ըստ այդմ պարզելու ցեղասպանված հայերի թիվը: Այս մտքի բուն հեղինակները (հատուկ՝ Ա. Քոչարյանն ընդամենը դա շրջանառության մեջ դնողն է) հավանաբար նախ վատ գիտեն Հայոց ցեղասպանության ուսումնասիրման ողջ ահռելի ժառանգությունը հայ եւ օտարազգի ցեղասպանագետների կողմից, որի շրջանակում վաղուց բնակավայր առ բնակավայր տեղահանված հայերի թվեր են արձանագրված, կամ դիտավորյալ վատ գիտենալու են տալիս: Անտեսո՞ւմ են այդ ժառանգության գլխավոր եզրահանգումները, որոնցից ամենակարեւորն այն է, որ ցեղասպանություն իրականացրած թուրքական իշխանությունները իրենց երկրի ներսում, ասել է թե՝ հայերով հոծ բնակեցված Արեւմտյան Հայաստանի բնակավայրերում, ցեղասպանության իրականացմանը զուգահեռ ու հետո էլ, հետեւողականորեն ոչնչացրել են բոլոր այն արխիվները, որոնք պարունակել են տեղացի հայերի մասին ժողովրդագրական, անհատական եւ բոլոր մնացած տվյալները: Այնպես որ հենց այս մի տեսանկյունից եթե նայենք ցուցակագրման մասին առաջարկին՝ սա թուրքական պնդում է, քանի որ Թուրքիայի բնակիչ հայերի տվյալներով արխիվների չգոյությունը Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական կռվաններից մեկն է: Անգամ թուրք ուսումնասիրողները դրա հիման վրա նոր թվեր են շրջանառում (օրինակ՝ թուրք ուսումնասիրող Ֆուաթ Դյունդարը), թե Արեւմտյան Հայաստանում միլիոնուկես հայեր են ապրել ընդամենը, ու իրենց տերմինով՝ տեղահանումների ժամանակ զոհվածների թիվը, իրենց թվաբանությամբ, այդ թվի կեսից շատ ավելի քիչ է: Բացարձակ կեղծիք եւ սուտ:

Հազար ու մի հաշվարկ կա մասնագետների, որոնք ստույգ պատկեր վաղուց արդեն տվել են: Նույնիսկ Հայոց ցեղասպանության հետեւանքով աշխարհի որբանոցներում հայտնված հայ մանուկների թվերը հուշում են ցեղասպանվածների ահռելի թվի մասին: Բազմաթիվ ուսումնասիրություններ կան, ըստ որոնց 1915-1916 թվականներին ամերիկացի եւ ֆրանսիացի միսիոներները թուրքական գերությունից ազատել են 814000 հայ երեխաների եւ նրանց տեղավորել աշխարհի ավելի քան 70 երկրների հատուկ մանկատներում: Եթե այս որբ երեխաների սպանված ծնողների թվով սոսկ հաշվարկ արվի, ապա զոհվածնեի թիվը միլիոնուկեսից էլ շատ է դառնում, էլ չասած, թե որքան երեխաներ են սպանվել,մահացել գաղթի ճանապարհներին:

Մոտ 360.000 եւս հայ երեխաներ մնացել են թուրքական գերության մեջ: Նրանց մահմեդականություն են պարտադրել, փաստաթղթերում գրել են թուրքական անուններ եւ արգելել հիշել իրենց հայ ծնողներին: Նրանք դարձել են այժմ Թուրքիայում ապրող, անձնագրերում քուրդ կամ թուրք արձանագրված միլիոնավոր կրիպտոհայերի տատիկներն ու պապիկները:

Մյուս կողմից՝ որ ասվում է, թե Հայաստանը, Հայաստանի հայերը Թուրքիայից պահանջ չունեն, սա ամենախոցելի միտքն է, որ կրկնում են մեր իշխանավորները ե՛ւ միջազգային իրավական գործիքների, ե՛ւ պարզ դասական տրամաբանության առումով: Որովհետեւ Հայոց ցեղասպանության ուսումնասիրված պատճառներից մեկն էլ այն է, որ Սասունի կոտորածներից սկսած մինչեւ անցած դարի քսանականները տեւած հայերի ցեղասպանության շարժառիթներից մեկը Թուրքիայի հայերի ահռելի ունեցվածքին տիրանալու թուրքական մղումն է եղել, դա ապացուցող հազարավոր փաստաթղթեր, ինշուրանսներ, գրանցման վկայականներ, հարկային պարտավորությունների մուրհակներ եւ զանազան այլ վկայություններ կան: Թուրքիայի ներքին առեւտրի ութսուն տոկոսից ավելին եղել է հայ մեծահարուստների ձեռքին, որոնք Օսմանյան կայսրության կարեւոր հարկատուներն էին: Նրանց ոչնչացնելով՝ թուրքերը նրանց ունեցվածքով հարստացան, լցվեց կայսրության դատարկ բյուջեն՝ գործադրելով ժամանակավոր ընդունված այսպես կոչված՝ լքյալ գույքի մասին օրենքը, տեր դառնալով հայերի անհատական եւ հավաքական ունեցվածքին:Մարդուն սպանողի եւ նրա ունեցվածքը կողոպտողի հետ ինչպե՞ս պետք է վարվի դատարանը, եթե ոչ դատապարտելով եւ պարտադրելով սպանվածի ունեցվածքը վերադարձնել նրա իրավահաջորդներին:

Իսկ ունեզրկված, հայրենազրկված եւ ցեղասպանությունից փրկված հայերի խլյակներն ապաստանել են ոչ միայն ողջ աշխարհում, այլեւ ներկա Հայաստանի ողջ տարածքում: Նրանց ժառանգները, եթե ոչ պետականորեն, ապա անհատապես կարող են եւ պետք է պահանջներ ունենան ցեղասպանություն իրակացրած թուրքական կառավարության ներկա իրավահաջորդներից, դա չի կարող վաղեմության ժամկետ ունենալ:

Այնպես որ ներկա խոսակցությունը՝ զոհերի անունները հրապարակելու, Թուրքիայից պահանջ չունենալու մասին, շատ վտանգավոր խոսակցություն է ոչ միայն զգացմունքային առումով, այլեւ պետության եւ որպես անկախ պետության քաղաքացու միջազգային իրավունքները ոտնակոխ անելու առումով, ներկա Թուրքիայի ձեռքը կռվան տալով, որ Հայաստանն ինքը կասկածի տակ է դնում ցեղասպանության ենթարկված հայերի թիվը, ու բանը կարող է նաեւ ցեղասպանության ուրացման պարտադրանքին հասնել:

Իսկ զգացմունքային մակարդակում այս մտայնության ավերն ահռելի է, դա նվաստացնում է այժմ ապրող հայերի մեծ մասին, վիրավորում նրանց արժանապատվությունը, քանի որ նրանց պապերի ու տատերի կորսված կյանքի ու հայրենիքի փաստն է կասկածի տակ առնում: Սա կարող է ավելի ու ավելի շատ մարդկանց համբերության բաժակը լցնել, նույնիսկ՝ իշխանությանը սատարողների, կան նուրբ գծեր, որոնք տրորողը մտնում է ականապատ դաշտ:

**Հրանտ Մաթեւոսյանից** լավ ոչ ոք չի արել այս մտայնության զգացմունքային նկարագրությունը.«Հիշողության մեջ ես, ուրեմն վառվում ես, մարդ ես, հաշիվներ ունես, անհանգիստ ես, հիշողության մեջ չես՝ հրեն բաց դաշտում կովն արածում է առանց հիշողությունների, իսկ երեկ հորթին են մորթել»:

# Ինչպիսի՞ն կլինի Հարավային Կովկասը 2030 թվականին




ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ

*Քաղաքական վերլուծաբան, Եվրասիական փորձագիտական ակումբի համակարգող,*

**Վերջին շրջանում մեր հավաքական անհանգստությունը անվտանգության բացահայտ դեֆիցիտի կապակցությամբ հանգեցրել է քննարկումների, որոնց նպատակն է հասարակության լայն շերտերին հասցնել անվտանգ, ինքնիշխան պետության գոյության համար վարվող քաղաքականությունը, դրա առավելությունները, ակնառու թերությունները եւ, վերջապես, ձեւավորել ապագայի քիչ թե շատ ընդունելի տեսլական:**

Այս մղումներն են թելադրել գրելու հերթական վերլուծականս, որտեղ ինձ թույլ եմ տալիս քննարկել ինչպես մեզանում, այնպես էլ Վրաստանում եւ Ադրբեջանում առկա որոշ մոտեցումներ:

## Վրաստանը պատրաստվում է 2030 թվականին

Վրացական քաղաքական վերնախավը հույս ունեն, որ 2030թ. վերջապես կքննարկվի Եվրոպական Միությանը Վրաստանի անդամակցության հարցը: Այստեղ ասում են, որ Եվրոմիությունն ունի անդամության 8 թեկնածու եւ դրանցից մի քանիսին կարող է ընդունել իր կազմ արդեն 2030թ.: Վրացիների համար այս լավատեսական սցենարին արեւմտամետ հասարակական-քաղաքական դաշտը պատրաստվում է բծախնդրորեն: Տարբեր սոցիոլոգիական հարցումների համաձայն, Վրաստանի բնակչության 80-90% հավատում է, որ Վրաստանը կարող է դառնալ Եվրոպական Միության եւ ՆԱՏՕ-ի անդամ: Այս ձգտումն են թելադրում քաղաքական կյանքի բոլոր աշխույժ գործընթացները: «Վրացական երազանք» կուսակցության վարած քաղաքականությունը արժանի է մեծ հարգանքի, որովհետեւ չշեղվելով վրացական հասարակության վերոհիշյալ սպասումներից, շատ լավ հասկանում է, որ դեռ տարիներ կան մինչեւ այդ հավանական քննարկումը, եւ այդ տարիները դեռ պետք է լցվեն տնտեսական զարգացումով, քաղաքական կայունության ամրապնդմամբ եւ զգայուն տարածաշրջանային քաղաքականությամբ: Վրաստանը զգույշ, բայց հետեւողական քայլեր է անում Ռուսաստանի հետ քաղաքական երկխոսությունը զարգացնելու ուղղությամբ: Այստեղ հնարավոր են համարում տնտեսական հարաբերությունների զարգացումը նույնիսկ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի ցավոտ հարցերը ժամանակավորապես մի կողմ թողնելու միջոցով:

Վրացական ընդդիմությունը մեծամասամբ բաղկացած է էլ ավելի արեւմտամետ, Մ. Սաակաշվիլու կողմնակիցներից, բայց բարձրաձայն խոսել են սկսել նաեւ այլ ընդդիմադիրներ, որոնք կարծում են, որ ճիշտ կլիներ, օրինակ, Վրաստանի մասնակցությունը «3+3» ձեւաչափում: Ամեն դեպքում, Վրաստանում մի կոնսենսուս է ձեւավորվում, որտեղ վրացակենտրոն Հարավային Կովկասի ստեղծման համար պետք է կոնկրետ քայլեր անել:

Սա է պատճառը, որ մեր Եվրասիական փորձագիտական ակումբի առաջատար գիտնականները հնարավոր են համարում նոր ձեւավորվող իրողությունների պայմաններում խնդրել ինչպես ռուս, այնպես էլ վրացի գործընկերներին վրացական եւ ռուսական խոսույթներում պահել աբխազական երկաթուղով Կովկասը Ռուսաստանին միացնող նոր տրանսպորտային միջանցքի հարցը: Այս գաղափարը պաշտպանվում է նաեւ իրանցիների կողմից, որոնք նոր համագործակցության եւ նոր դաշինքների պայմաններում կուզենային գործարկել Թեհրան-Երեւան-Թբիլիսի-Մոսկվա երկաթուղին, մասնավորապես, ուղեւորների համար: Վրաստանում դեմ չեն սերտորեն համագործակցել Հայաստանի հետ, ինչը հնարավորություն է տվել հայ վերլուծաբաններին երկկողմ հարաբերություններում խոսելու բարեկամությունից ռազմավարական գործընկերության անցնելու մասին: Համենայն դեպս, Հայաստանի այսօրվա իշխանությունը կուզենար ճիշտ գնահատել այն ներուժը, որն ունի Հայաստան-Վրաստան համագործակցության զարգացումը Արեւմուտքի հետ համագործակցությունն ու վստահելի փոխգործակցությունը առաջ մղելու համար:

## Ադրբեջանի տեսլականը ադրբեջանակենտրոն Հարավային Կովկասի մասին

Ադրբեջանում համոզված են, որ ժամանակն աշխատում է իրենց երկրի օգտին: Ադրբեջանն իրեն տեսնում է որպես տարածաշրջանային առաջատար, որտեղ կարողանալու է թելադրել տարածաշրջանային համագործակցության պայմանները: Ադրբեջանում քաղաքական խնդիր է Թուրքիայի հետ լիակատար ինտեգրումը Հարավային Կովկասում առաջատար դիրք ապահովելու եւ դա պահպանելու նպատակով:

Դեռ 90-ական թթ. Արեւմուտքը Թուրքիային ճանապարհ է տվել ամրապնդելու իր դիրքերը Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում արեւմտյան շահերն առաջ մղելու նպատակով: Այսօր արեւմտյան, ռուսական, չինական եւ այլ ծրագրերի համադրման արդյունքում ստեղծվում է մի վիճակ, երբ բոլորին հարմար է, որ Հարավային Կովկասով անցնեն Արեւմուտք-Արեւելք եւ Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքները:

Կրկին հարկ ենք համարում անդրադառնալ «Արեւմուտք-Արեւելք» ռազմավարական առանցքին, որի գործնական արտահայտությունն է նույնանուն տրանսպորտային միջանցքը: Անցյալ դարի առաջին կեսին Թուրքիայում շատ տարածված էր համաթուրքականության, կամ, ինչպես ասում են՝ Մեծ Թուրանի տեսլականը: Դա նախկին Օսմանյան կայսրության ծրագիրն էր՝ ռուսական տարածքների վրա ստեղծել մեծ կայսրություն Հարավային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու մուսուլման ժողովուրդների ներգրավումով:

Խորհրդային Միության փլուզման արդյունքում Ադրբեջանն ու Կենտրոնական Ասիայի թյուրքական պետությունները անկախություն են ստացել եւ զարգացման տպավորիչ հաջողությունների են հասել անցած 30 տարում: Նրանք, այսօր, իհարկե, չեն համաձայնի մտնել Թուրքիայի կազմի մեջ: Այդպիսի հարց այսօր չի էլ դրվում: Մեր ժամանակների առանձնահատկությունն այն է, որ թյուրքական պետությունների ինտեգրումը զուգակցվելու է բոլոր մասնակիցների ազգային պետականության ու ինքնիշխանության ամրապնդմամբ: Այժմ արտակարգ արդիական են դարձել քաղաքագիտական եւ տնտեսագիտական վերլուծությունները, որոնք ճշգրտորեն կուրվագծեին, թե ինչ գլխավոր ուղղություններով է զարգանալու թյուրքական պետությունների միջեւ այդ ինտեգրացիոն գործընթացը:

Աշխարհը փոխվում է: Փոխվում են նաեւ քաղաքական ու տնտեսական մոտեցումները: Մեր հավաքական կեցվածքից առայժմ չի երեւում, որ մենք ի վիճակի ենք գեներացնելու թարմ գաղափարներ փորձանքը մեզնից հեռու տանելու համար: Այնինչ կարելի էր մտածել, որ հայ քաղաքական եւ տնտեսական միտքն այսքան շատ գիտնականների ու փորձագետների առկայությամբ պետք է որ կարողանար համարժեք մոտեցումներ մշակել այսօրվա տարածաշրջանային իրողություններին: Եթե մեզանում կարծում են, որ դրսից ինչ-որ մեկը պատվիրելու է նման մշակումներ իրենց, ապա չարաչար սխալվում են: Սա հայերիս, եւ միայն հայերիս խնդիրն է՝ կանխատեսելի ու անվտանգ պետականություն, Հայաստանին եւ Վրաստանին օդ ու ջրի պես անհրաժեշտ են կենսունակ գաղափարներ ներդաշնակորեն տեղավորվելու համար, թյուրքական ինտեգրման դաշտի մեջ, պահպանելու իրենց ինքնիշխանությունը եւ ամրապնդելու անվտանգությունը: Մեր քաղաքական դաշտի հռետորաբանությունից դեռ չի երեւում, որ նման մոտեցումներ մշակվում են:

## Հայաստանն ընտրության առջեւ

Եթե 2030թ. Վրաստանն ընդունեն Եվրոպական Միության կազմ, ԵՄ-ն կմտնի Հարավային Կովկաս: Ինչպես ժամանակին պատահեց Եվրոպայի Խորհրդին անդամության հարցում, Վրաստանի անդամակցությունը այդ միջազգային իրավական կառույցին խթանեց իրավական բարեփոխումներ Հայաստանում եւ Ադրբեջանում: Հարց. իսկ եթե 2030թ. Վրաստանին չընդունե՞ն: Իսկ եթե այդ հարցը հետաձգվի կրկին անորոշ ժամանակո՞վ: Կամ նոր զարգացող համաշխարհային ու տարածաշրջանային գործընթացները բարդացնե՞ն այդ անդամակցությունը: Հայաստանի արեւմտամետ գործիչներն ասում են, որ եվրոպական ինտեգրման տեմպերն արագացնելու մասին խոսակցությունները վարում են նրանք, ովքեր փորձում են խոչընդոտել այդ գործընթացները (մարդկանց հիասթափեցնելու նպատակով): Բայց քարոզչությունից մի կողմ գնալով հասկանո՞ւմ ենք մենք արդյոք, որ աշխարհում ծավալվող գործընթացները իսկապես ահագնացրել են մեծ սպառնալիքնեը եւ անգամներ փոքրացրել Հայաստանի անվտանգության երաշխիքները:

Այո, մենք համաձայն ենք, որ Ռուսաստանի, առանձին վերցրած, ազդեցությունը Հարավային Կովկասումն մի շարք պատճառներով փոքրացել է: Մենք հասկանում ենք, որ այսօր տարածաշրջանում ակնհայտորեն մեծանում է Թուրքիայի ներկայությունը: Մենք հստակ պատկերացնում ենք, որ տարածաշրջանային գործընթացների գլխավոր պատասխանատուներն են Թուրքիան, Ռուսաստանն ու Իրանը միասին եւ դրա համար էլ շատ կենսունակ է «3+3» խորհրդատվական հարթակը: Բայց եթե նույնիսկ կա ընդհանուր պատկերացում վերը ասվածի մասին, առայժմ չի երեւում, որ տարածաշրջանային գործընթացներում ներդաշնակորեն տեղավորվելն է մեր իշխանության գլխավոր խնդիրը: Հայաստանի իշխանությունը հայտարարում է, որ գլխավոր նպատակ է համարում ԱՄՆ-ի ու Եվրոպական Միության հետ համագործակցության ամրապնդումը, դա անվանելով ցանկություն լիարժեքորեն մաս կազմելու եվրոպական ազգերի ընտանիքին: Եվ սա այն ժամանակ, երբ Վրաստանը, որ այդ ճանապարհով արդեն լի ու լի անցել է, ավելի արդիական ու ժամանակակից խնդիրներ է իր առջեւ դնում: Ինչո՞ւ պետք է Հայաստան-Վրաստան ապագա ռազմավարական գործընկերությունը ուղղված լինի Ռուսաստանի դեմ, կամ լինի նրա հաշվին: Ինչպե՞ս է դա հնարավոր:

Արցախյան երկրորդ պատերազմը եւ արցախցիների բռնի տեղահանությունը փոխեցին բնակչության ստվար մասի վերաբերմունքը Ռուսաստանի հանդեպ: Հայաստան-Ռուսաստան հարաբերությունները վատացան: Հայաստանը զիջեց իր տեղերը Ռուսաստանի բարեկամ երկրների վարկանիշային ցանկում եւ այժմ գտնվում է եզրափակիչ 10-րդ տեղում, որից հետո գալիս է կա՛մ հարաբերականորեն բարեկամ/ հարաբերականորեն ոչ բարեկամ Վրաստանը, նրանից հետո էլ Ռուսաստանի ոչ բարեկամ համարվող Մոլդովան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան եւ Ուկրաինան: Հնարավո՞ր է արդյոք կասեցնել այդ անկումը եւ թույլ չտալ հարաբերությունների հետագա վատթարացում:

## Որոշ դեղատոմսեր ավելի անվտանգ Հայաստանի համար

Մինչեւ 2030թ. դեռ վեց տարի կա: Տողերիս հեղինակը կարծում է, որ կարելի է կրկին սկսել աշխատել մեռյալ կետից հայ-ռուսական հարաբերությունները դեպի ավելի կենսական դարձնելու համար: Անհրաժեշտ է վերալիցքավորել հայ-ռուսական հարաբերությունների ամբողջ համալիրը: Հայ-ռուսական հարաբերություններին ռեստարտ է պետք: Եթե մենք ունենք դժվարություններ նորից սկսելու հարաբերությունների կարգավորումը նոր իրողությունների շրջանակում եւ նոր մոտեցումներով, մենք պետք է մտածենք, թե ով կարող է մեզ օգնել: Լավ իմանալով ժամանակակից Ռուսաստանը եւ ժամանակակից Ղազախստանը, թույլ եմ տալի ինձ մի կանխատեսում անել առ այն, որ Ղազախստանի նախագահ Տոկաեւը (որ շատ գոհ էր իր վերջին այցից Հայաստան) կարող էր մի վստահելի միջնորդություն կատարել հայ-ռուսական բանակցային գործընթացը վերսկսելու համար: Ե՛վ Ռուսաստանը, ե՛ւ Հայաստանը հայտնվել են մի վիճակում, որտեղ ակնհայտորեն թարմ մոտեցումներ եւ նոր գաղափարներ են անհրաժեշտ: Հայ-ռուսական առեւտրատնտեսական հարաբերությունների աննախադեպ բարձր մակարդակը վճռական փաստարկ է երկկողմ հարաբերությունների բոլոր ոլորտները առաջ մղելու օգտին:

Ռուսաստանը, Թուրքիան եւ Իրանը բոլոր մակարդակներում մշտական կապի մեջ են եւ շատ լավ են պատկերացնում իրենց համագործակցության եւ փոխգործակցության իրական հնարավորությունները: Հայաստանին հարկավոր է ներդաշնակորեն ներգրավվել տարածաշրջանային գործընթացներում: Երեկվա թշնամիները կարող են եւ վաղվա գործընկերներ լինել: Իրար հետ շփվել, առեւտուր անել եւ փոխազդեցություններ ունենալ: Բայց այսքանը հասկանալով, ինչո՞ւ է հարկավոր երեկվա բարեկամներին այսօր թշնամի դարձնել: Ո՞րն է դրա տրամաբանությունը:

ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ

*Մոսկվայում «Ազգ»-ի հատուկ թղթակից*

# Հրաչյա Պողոսյանի գործունեությանը նվիրված գրքի շնորհանդես Սանկտ Պետերբուրգում






Ապրիլի 9-ին Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցավ մեր հայրենակից, ճանաչված բարերար եւ հասարակական գործիչ **Հրաչյա Պողոսյանի** կյանքի եւ գործունեության մասին պատմող **«Մեր հիշողության հովանավորը»** գրքի շնորհանդեսը:

Միջոցառումն սկսվեց մեկ րոպե լռությամբ՝ ի հիշատակ Crocus City Hall-ում տեղի ունեցած ահաբեկչության զոհերի: Այդ առթիվ Վլադիմիրի տաճարի հոգեւորական, քահանա **Անտոնի Մալախովսկին** եւ Միխայլովսկու թատրոնի մեներգչուհի **Իրինա Նեկլյուդովան**՝ ակորդեոնահար **Ալեքսեյ Վինոգրադովի** նվագակցությամբ կատարեցին «Կռունկներ» երգը:

«Մեր հիշողության հովանավորը» գիրքը հանրությանը ներկայացրեց «Կոմսոմոլսկայա պրավդայի» մեդիա խումբը: Շնորհանդեսը վարում էր նույն մեդիա խմբի ռադիոհաղորդավար **Օլգա Մարկինան**:

«Կոմսոմոլսկայա պրավդա» հրատարակչության կողմից լույս ընծայված գիրքը, որի հեղինակն է **Անտոն Ռասնիկովը**, պատմում է Հայաստանի Ագարակ փոքրիկ գյուղում մեծացած հայ տղայի՝ տարիներ անց արդեն Սանկտ Պետերբուրգի պատվավոր հովանավոր Հրաչյա Պողոսյանի կյանքի ուղու մասին՝ մանկություն, ուսում, ընտանիք, հասարակական գործունեություն, բարեգործություն, ճանաչում...

Հրաչյա Պողոսյանը 25 տարվա բարեգործական գործունեության ընթացքում աշխարհի 14 երկրներում իրականացրել է ավելի քան 400 ծրագիր, որոնցից 200-ը նվիրված են Հայրենական մեծ պատերազմի հերոսներին եւ իրադարձություններին:

Ի դեպ, ճանաչված բարերարի կյանքի եւ գործունեության մասին յուրօրինակ եւ ինքնատիպ գիրք պատրաստելու նպատակով «Կոմսոմոլսկայա պրավդայի» սանկտպետերբուրգյան մասնաճյուղի ստեղծագործական խումբն անցյալ տարվա ամռանը Հայաստանում էր:

«Երկրագնդի վրա չկա որեւէ այլ երկիր, որն այնքան լի լինի հրաշքներով, որքան հայերի երկիրը». վկայակոչելով անգլիացի նշանավոր բանաստեղծ, հայ ժողովրդի բարեկամ **Ջորջ Բայրոնի** այս խոսքերը՝ ռուսական տարբերականն իր կողմից հավելել էր՝ «Անհնար է վիճել անգլիացի բանաստեղծի հետ, քանզի «Կոմսոմոլսկայա պրավդայի» պատվիրակությանը բավական է եղել Հայաստանում մնալ ընդամենը չորս աշխատանքային օր, որպեսզի հասկանա այդ խոսքերը՝ Հայաստանում, իրոք, հրաշքներ կան: Ավելին, այստեղ դրանք մշտական են, ինչպես Արարատ լեռան տեսարանը»:

Ռուսական տարբերակի ստեղծագործական խումբը չորս օրերի ընթացքում շրջել էր Հայաստան աշխարհի բազմաթիվ տեսարժան վայրերով, եղել շատ ու շատ բնակավայրերում, այդ թվում նաեւ Հրաչյա Պողոսյանի հայրենի Ագարակ գյուղում եւ ամենուրեք ականատես եղել ճանաչված բարերարի, մեծ հայրենասերի եւ հայ ժողովրդի արժանի զավակի կյանքի կոչած տասնյակ ու տասնյակ բարեգործական ծրագրերին:

«Կոմսոմոլսկայա պրավդայի» ներկայացուցիչները անձամբ համոզվել են, որ Հայաստանում իրենք ասես տանը լինեն, փողոցներում հաճախ կարելի է լսել ռուսերեն խոսք, տեղացիներից շատերը կարողանում են ազատ հաղորդակցվել ռուսերենով»:

Գրքի հեղինակն անդրադարձ կատարելով Հրաչյա Պողոսյան մարդու եւ բարեգործի կերպարին՝ նշել է, որ Սանկտ Պետերբուրգում նրան շատերն են ճանաչում, իսկ Հայաստանում ճանաչում են գրեթե բոլորը: Հրաչա Պողոսյանի գործերը բազմազան են, մեկը մյուսից տարբեր, բայց բոլորի շարժիչ ուժը մեկն է, ինչը եւ բխում է բարերարի հոգուց եւ սրտից՝ հարգանքը դեպի մեր անցյալի թանկ հիշատակներն ու հիշողությունները, սերը դեպի մարդը: Եվ այս ոգով՝ Պողոսյանը բացել է հուշարձաններ եւ հուշատախտակներ, կանգնեցրել հուշահամալիրներ՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմին:

Գիրքը ներկայացնողները նշեցին, որ անցյալ տարվա հունիսին Սանկտ Պետերբուրգում հանդիսավորությամբ անցկացված «Լրատվամիջոցների տարվա մարդ» մրցանակաբաշխության ժամանակ Հրաչյա Պողոսյանը հաղթող է ճանաչվել «Մեր հիշողության հովանավորը» անվանակարգում:

Բազմաթիվ անվանի եւ ճանաչված խմբագիրներ այդ օրը նշել էին, որ եթե քաղաքում, երկրում եւ աշխարհում Հրաչյա Պողոսյանի նման մարդիկ գոնե տասը տոկոսով շատ լինեին, ապա հասարակությունը կապրեր ուրախ ու երջանիկ:

Գրքի շնորհանդեսին իրենց բարեմաղթանքներով եւ շնորհավորանքներով հանդես եկան քաղաքային վարչակազմի եւ Լենինգրադի մարզի ներկայացուցիչներ, Խորհրդային Միության մարշալների ժառանգներ, պաշարված Լենինգրադի բնակիչների, ինչպես նաեւ վետերան կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Միջոցառմանը ներկա էին Հրաչյա Պողոսյանի հարազատներն ու ընկերները, նրա կինն ու երեխաները: Ի դեպ, գրքի շապիկին պատկերված է Պողոսյանի 8-ամյա որդին՝ **Գրիգորին**: Տղան նշեց, որ իր համար ամենանշանակալի նախագիծը հայրիկի առաջին ծրագիրն էր՝ կանգառը հայրենի Ագարակ գյուղում:

Ըստ Գրիգորի ուսուցչի՝ **Դարիա Ալեքսանդրովնայի** պատմածի, բոլորն իմացել են, որ Գրիգորին դասի ժամանակ պատմել է իր հոր եւ Ագարակ գյուղի իր սիրելի կանգառի մասին: Պատմությունն այնքան տպավորել էր դասընկերներին, որ նրանք սկսել են քննարկել, թե ինչ կցանկանային անել, երբ մեծանան եւ աշխատեն իրենց առաջին գումարը:

Անչափ անկեղծ եւ հուզիչ էր նաեւ Սանկտ Պետերբուրգի պատվավոր հովանավոր Հրաչյա Պողոսյանի խոսքը.

«Երբ սկսեցի զբաղվել բարեգործությամբ, երբեք չէի մտածում, որ դա մի օր կկոչվի բարեգործություն, չէի մտածում, որ իմ բարեգործական հիմնադրամը մի օր կարժանանա «Սանկտ Պետերբուրգի պատվավոր հովանավոր» կոչմանը, որ իմ գործերը կարժանանան հանրության ջերմ սիրուն եւ գնահատանքին: Աշխարհը կառուցված է եւ կանգնում է լավ մարդկանց շնորհիվ. շնորհակալ եմ, որ նրանք կան եւ ինձ հետ են այսօր»:

«Մեր հիշողության հովանավորը» գիրքը գրվել է Լենինգրադի շրջափակումից ամբողջական ազատագրման 80-ամյակի շրջանակներում:

Ուշագրավ է նաեւ այն փաստը, որ միջոցառումը տեղի է ունեցել Ռուսաստանում ապրիլի 13-ին նշվող հովանավորի եւ բարերարի օրվան ընդառաջ:

«Կոմսոմոլսկայա պրավդա» մեդիա խմբի գլխավոր տնօրեն **Իրինա Ժեգլովան** եւ գրքի հեղինակ Անտոն Ռասնիկովը գրքի լուսընծայման առիթով ուշագրավ գրառում են կատարել. «Այս գիրքը կարդալուց հետո ոչ միայն կճանաչեք Հրաչյա Միսակովիչին, այլեւ ավելի իմաստուն կդառնաք, ավելի բարի կլինեք, կհավատաք այն հրաշքներին, որոնցով պատված է այս մարդու կյանքը բոլոր կողմերից: Եվ մենք հավատացինք այդ հրաշքներին՝ հատկապես, երբ գնացինք Հայաստան, որտեղ ծնվել է մեր հերոսը:

Անկասկած՝ սա պետք է լիներ գեղեցիկ նկարազարդումներով մի վեպ, գեղեցիկ, լուսավոր եւ բարություն ճառագող գիրք՝ ինչպիսին Հրաչյա Պողոսյան մարդու բարի եւ լուսավոր կերպարն է»:

**Երբ հոդվածն արդեն պատրաստ էր տպագրության՝ ուրախությամբ տեղեկացանք, որ Հրաչյա Պողոսյանը պարգեւատրվել է Սանկտ Պետերբուրգի նահանգապետ Ալեքսանդր Բեգլովի շնորհակալագրով.**

Հիշեցնենք, որ 2023 թվականին Հրաչյա Պողոսյանի անունը ներառվել է «Ռուսաստանի ոսկե անունների» գրանցամատյանում:

Շնորհավորում ենք մեր պատվարժան հայրենակցին Սանկտ Պետերբուրգի նահանգապետի կողմից ըստ արժանվույն գնահատվելու համար:

# Նոր գիրք՝ «Հայերն Աֆրիկայում»




Լոյս է տեսել «**Ազգ**»ի երկարամեայ հեղինակ, բանասիրական գիտութիւնների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի հայկական գաղթօջախների եւ սփիւռքի բաժնի աւագ գիտաշխատող **Արծուի Բախչինեանի** «Հայերն Աֆրիկայում. Պատմաբանասիրական ուսումնասիրութիւն» հատորը (Երեւան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտ, 2024): Խմբագիրն է պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր **Գեւորգ Ստեփանեանը**:

Ուսումնասիրութեան մէջ ի մի են բերուած պատմական եւ մշակութային քաղ ու քրիւ փաստեր, որ վերաբերում են հայերի ներկայութեանն աֆրիկեան ցամաքամասի երկրներում 25 երկրներում՝ հնագոյն ժամանակներից մինչեւ մեր օրերը: Աշխատութիւնը չի ներառում Եգիպտոսի եւ Եթովպիայի հայութեան պատմութիւնը, քանի որ դրանք վաղուց ի վեր գրուած եւ ուսումնասիրուած են: Ամենից ընդարձակը Սուդանի հայ համայնքի պատմութեանը վերաբերող գլուխն է: Բացի բուն բովանդակութիւնից՝ հատորն ունի մէկ յաւելուած («Հայ-աֆրիկեան շփումներ այլ երկրներում»), ամփոփումներ երեք լեզուով (անգլերէն, ֆրանսերէն եւ աֆրիկեան լինգալա լեզուով), օգտագործուած գրականութեան, անձնանունների եւ տեղանունների ցանկեր:

Հատորը դասական ուղղագրութեամբ է, շապիկին լուսանկարին սուդանաբնակ Մկրտիչ Ուլիկեանն է՝ սեւամորթ մի ցեղի հետ (նրա վերաբերեալ Արծուի Բախչինեանի յօդուածը լոյս է տեսել «Ազգում», 2020, սեպտեմբերի 4):

Մինչ այս պատմաբանասէր Արծուի Բախչինեանը հեղինակել է աշխատութիւններ (առանձին հատորներով եւ յօդուածներով) հետեւեալ երկրների եւ տարածաշրջանների հայօջախների մասին՝ Սկանդինավեան պետութիւններ, նախկին Հարաւսլաւիայի երկրներ, Ալբանիա, Չեխոսլովակիա, Սիբիր, Չինաստան, Ճապոնիա, Ովկիանոսք (Օվկիանիա):

ՆԱԻՐ ՅԱՆ

# Կ. Պոլսի 30 հազար հայ աշակերտների մեջ հայերեն իմացող 3 հոգու չես գտնի. «Ժամանակ» օրաթերթի խմբագրի ահազանգը

Կոստանդնուպոլսում հրատարակվող «Ժամանակ» օրաթերթը 116 տարեկան է, այս ամբողջ ընթացքում թողարկվել է անընդմեջ: Ոչ միայն Սփյուռքում, այլեւ առհասարակ հայ իրականության մեջ ամենահին օրաթերթն է:

Գոչունյան տոհմի արդեն 4-րդ սերունդն է հրատարակում «Ժամանակը»: Թերթը 1908 թվականին հիմնադրել են **Միսաք** եւ **Սարգիս Գոչունյան** եղբայրները, հիմա այն ղեկավարում է նրանց ժառանգը՝ **Արա Գոչունյանը**:

Ժամանակի պահանջով «Ժամանակը» ունի նաեւ կայքէջ, որի սփռումն, անշուշտ, շատ ավելի մեծ է, քան թերթինը: Թերթը լույս է տեսնում օրական 1000 օրինակով եւ սպառվում է Կ.Պոլսում:

«116 տարի Թուրքիայում հրատարակվելը չի կարելի բացատրել միայն Գոչունյան տոհմի համառությամբ: Բալկաններից մինչեւ Կովկաս, մինչեւ Եգիպտոս «Ժամանակը» կանոնավոր տարածում ու սպառում է ունեցել: Հետո, աստիճանաբար աշխարհագրությունը փոքրացել է, որովհետեւ այդ տարածքները զրկվել են հայերից: Եվ թերթն աստիճանաբար սկսել է սահմանափակվել Կ. Պոլսով:

Լրատվամիջոց լինելով՝ այն ազգային ինքնությունը պահպանելու, հայապահպանության լծակ լինելու առաքելություն է ունեցել: Ընթերցողները հայ իրականության մասին տեղեկություն ստանալուց բացի, նաեւ իրենց մայրենի լեզվի հետ ամենօրյա կապն են պահել: Հայ ընտանիքները ցանկացել են «Ժամանակ» օրաթերթն իրենց օջախներում ունենալ ու փոխանցել սերնդեսերունդ:

Ժամանակները փոխվել են, այսօր տպագիր թերթ պահելը բավականին բարդ է: Տպագիր թերթ հիմա առաջվա պես հաճախ չեն կարդում, այն սպառել է իրեն, բայց շարունակում է հասարակական կարծիքի ձեւավորման վրա ազդեցություն ունենալ»,- «**Ազգ**»-ի հետ զրույցում ասաց «Ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր **Արա Գոչունյանը** վերջերս Հայաստան կատարած իր հերթական այցի ընթացքում:




Արա Գոչունյանն էլ է բազմաթիվ խմբագիրների նման գիտակցում, որ ժամանակակից աշխարհը հակված է դեպի էլեկտրոնային մամուլը, մարդիկ ուզում են ինֆորմացիա ստանալ մատի մեկ հպումով՝ հեռախոսով: Այդ իրողության դեմ չես կարող պայքարել, պարզապես պետք է դրա հետ հաշվի նստել ու փորձել լրատվամիջոցը ներկայացնել նաեւ էլեկտրոնային հարթակներում:

«Սփյուռքում ու հատկապես Թուրքիայում հայ համայնքի հավաքական կյանքը նոր ժամանակների անհրաժեշտություններին համապատասխանելու առումով շատ է դանդաղում, արձագանքելու տեսակետից խիստ սահմանափակ է: Լուրջ խնդիր է դարձել Սփյուռքի ավանդական կառույցների առաքելությունը հաջորդ սերունդներին փոխանցելը: Յուրաքանչյուր սերունդ հայապահպանման գործը պատրաստվում է սկսել զրոյից, որովհետեւ փոխանցման մեխանիզմներն առհասարակ չեն աշխատում: Մեր թերթի մարտահրավերներն այս իրողությանն են վերաբերում»,- մեզ հետ զրույցում ասաց «Ժամանակ»-ի խմբագիրը:

Այնուհետեւ Արա Գոչունյանը ներկայացրեց այն մարտահրավերները, որոնց դեմ հանդիման է հայկական մամուլը Սփյուռքում, եւ որոնք հաղթահարելն ավելի ու ավելի դժվար է դառնում:

«Ամենամեծ հարցն այն է, որ «Ժամանակ» օրաթերթն սկսեց պատահական եկամուտներով գոյատեւել. մենք միայն տպագիր թերթի շնորհիվ ենք շարունակում եկամուտներ ունենալ: Այսօր որեւէ մեկի կողմից չկա վարչարարական կամք, որ ցանկություն լինի տվյալ լրատվամիջոցը պահել ոչ միայն այսօր, այլեւ ապահովվի նրա շարունակականությունը նաեւ ապագայում:

Իսկ այսօրվա պահածը խիստ խաբուսիկ է, երաշխիքներ չունի:

Սա ընդհանրական հիմնախնդիր է. ամբողջ աշխարհում արեւմտահայերենով ու դասական ուղղագրությամբ հրատարակվող լրատվամիջոցների հարցը լուրջ է:

«Ժամանակը» կուսակցական լրատվամիջոց չէ, իսկ հայտնի է, որ Սփյուռքում տպագրվող պարբերականները՝ լինի թերթ, թե կայք, հովանավորվում եւ ֆինանսավորվում են այս կամ այն կուսակցության կողմից: Լրատվամիջոցի լինել-չլինելու որոշումները կուսակցություններն են կայացնում: «Ժամանակը»՝ որպես անկախ լրատվամիջոց, ապագայում եւ մեր բնօրրանում՝ Պոլսում, հրատարակվելու հնարավորություններից օգտվել չի կարող, ապագայում եւս գործելու երաշխիքներ չունի»,- նկատեց Արա Գոչունյանը:

Կ.Պոլսում 3000 աշակերտ ունեցող դպրոցների ցանց է գործում: Միջին հաշվարկով վերջին 10 տարում այդ դպրոցները 30 հազար հայ աշակերտ են ունեցել:

Բայց այդ 30 հազարի մեջ գրավոր եւ բանավոր հայերենին լիարժեք տիրապետող 3 շրջանավարտ չես գտնի. պատմում է խմբագիրը:

Սա դպրոցական ամբողջ համակարգի սնանկության ապացույցն է, որի մասին Արա Գոչունյանը ցավով է նշում: Ի դեպ, այդ դպրոցական համակարգի վրա ամեն տարի միլիոնավոր դոլարներ են ծախսվում:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու հովանու ներքո է գործում այս ամբողջ համակարգը, իսկ համայնքին պատկանող միջոցները տնօրինում են եկեղեցիների վարչական խորհուրդները, որոնք էլ հովանավորում են դպրոցական համակարգերը: Եկեղեցու լեզուն հայերենն է, բայց հոգեւոր դասը մի կարգին հայերեն էլ չգիտե. իրականությունը ներկայացրեց Արա Գոչունյանը:

«Ստացվում է, որ կա մի համակարգ, որն իր լինելության, գոյության նպատակին չի ծառայում, շեղվել է այդ նպատակից: Այս իրավիճակում «Ժամանակ» օրաթերթի ամենօրյա հրատարակումը նշանակում է վերահաստատել այդ համակարգի սնանկությունը: Թերթն ամեն օր այդ ահազանգը հնչեցնում է, ու մարդիկ ամեն օր այդ սնանկության մերկացումի մասին կարդում են ու իրենք էլ են առերեսվում այդ իրականությանը: Այս հակասական իրավիճակում հոսանքի դեմ թիավարելով՝ փորձում ենք ապագա ստեղծել»,- «Ժամանակ» օրաթերթի ու Թուրքիայի հայ համայնքի մասին հարցի պատասխանը եզրափակեց Արա Գոչունյանը:

Զրույցի շարունակությունը՝ «**Ազգ**»-ի հաջորդ համարում:

Արա Գոչունյանի հետ հարցազրույցի տեսանյութը կարող եք դիտել Azg.am կայքում, հետեւյալ հասցեով՝ https://www.youtube.com/watch?v=iNoTFw300Ek&ab–channel=Azg

# Գրքի շնորհանդես՝ «Վլադիմիր Պոզներ. սիրտս հայկական կողմում է: Կուզենայի հարցազրույց վերցնել Լեոնարդո դա Վինչիից»

Ապրիլի 19-ին՝ ժամը 18:30-ին, «Թեքեյան» կենտրոնի դահլիճում (հասցեն՝ Երեւան, Խանջյան 50) կկայանա Հայաստանի Թեքեյան մշակութային միության անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգո Երիցյանի՝ «Վլադիմիր Պոզներ. սիրտս հայկական կողմում է: Կուզենայի հարցազրույց վերցնել Լեոնարդո դա Վինչիից» գրքի շնորհանդեսը:




Գիրքը լույս է տեսել 2022 թվականին՝ պրոֆեսոր Սերգո Երիցյանի թարգմանությամբ:

Գիրքը նվիրված է ռուսաստանցի հայտնի լրագրող Վլադիմիր Պոզներին: Գրքում տեղ են գտել Վլադիմիր Պոզների՝ 2019 թվականի մայիսին Երեւանում ունեցած հանդիպումներին, այնտեղ արտահայտված մտքերին, ինչպես նաեւ լրատվամիջոցների հրապարակումներին:

Ներկայացվում են նաեւ Վլադիմիր Պոզների հարցազրույցները հայորդիների հետ:

Գիրքը պատկերացում է տալիս նաեւ Պոզներ- Հայաստան կապի մասին, որը սկսվում է նաեւ նրա ամուսնությամբ Ալեքսանդր Սպենդիարյանի ազգականուհու՝ Վալենտինա Չեմբերջիի հետ:

Գիրքը նախատեսված է ինչպես ընթերցողների լայն շրջանակների, այնպես էլ լրագրության ոլորտի համար, քանի որ Սերգո Երիցյանի նպատակն է եղել գրքի միջոցով ընդգծել հարցազրույցի ժանրի՝ պոզներյան տեսության կարեւորությունը: Այդ առումով այն շատ կարեւոր է հատկապես լրագրողի ոլորտն ընտրած անհատների



*Սերգո Երիցյանը ծնվել է 1957 թվականին, 1975-1978 թթ. սովորել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում, 1978-1981 թթ.՝ Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում, ապա՝ նույն մասնագիտության ասպիրանտուրայում: 1981 թվականից Սերգո Երիցյանը դասավանդել է տարբեր բուհերում՝ Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանում, ԵՊՀ-ում, Մանկավարժական համալսարանում:*

*Բազմաթիվ գրքերի, մասնագիտական ձեռնարկների, գիտական հրապարակումների հեղինակ է: Նրա գրականագիտական եւ լրագրողական ծանրակշիռ վաստակում առանձնանում են տասնյակ գիտական աշխատություններ՝ մենագրություններ, մասնագիտական բառարաններ, ձեռնարկներ, ինչպես նաեւ հեռուստահաղորդումներ, որոնք մինչ օրս հիշում են հեռուստադիտողների բազում սերունդներ:*

Սիրով հրավիրում ենք մասնակցելու եւ լուսաբանելու միջոցառումը:

Հարցումներով՝ Հայաստանի Թեքեյան մշակութային միության լրատվական կենտրոն՝ հեռ.՝ 010 55 26 32, 010 57 02 83:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԳ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48
e-mail: info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 18.04.2024, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: